№ 8 (196) XVIII ՏԱՐԻ ՕԳՈՍՏՈՍ 1908

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԱՅԺՄԷԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԸ

Խանդավառութեան բռնկումից յետոյ պէտք է սկսի զգաստ ու աչալուրջ գնահատութիւնը իրողութիւնների ու յարաբերութիւնների։ Զը տարբինք կարմիր լաւատեսութեամբ և բերկրանքի արբեցութեան մէջ չ'անգիտանանք օրւայ անհրաժեշտ, ստիպողական մեր պարտաւորութիւնները։ Պահանջներ կան, կենդանի, հրատապ այժմէութեան, որոնց վրայ պէտք է անդրադառնանք անմիջապէս և լրջօրէն, մեր ամբողջ էութեամբ, եթէ չենք ուզում զոհ դառնալ գալոց հնարաւոր փոթորիկների... Որոշ իրողութիւններ գալիս են մերթ ընդ մերթ աղդարարելու, որ վտանգն իսպառ չէ վերացած։ Սահմանադրութիւնը, նախ քան խօսքից գործի վերածուիլը, ունի իր առջև մի շարք հանգրուաններ, որոնք թերևս չ'իրականանան առանց արկածների ու ցնցումների։

Ընդհանրացնելով, կարող ենք ասել, որ այդ վտանգը միշտ էլ կը մնայ ծառացած ազատութեան գաղափարի հանդէպ, քանի դեռ այդ ազատութիւնը չի դառնայ ժողովրդական լայն ծալքերի սեփականութիւն, քանի դեռ նա չի շաղկապւի իր անհրաժեշտ լրացուցիչ—հաւասարութեան հետ, քանի դեռ նա չի նոյնանայ համաժողովրդական բարօրութեան գերագոյն տենչին։ Այդպէս է ուսուցանում լուսաւոր ազգերի պատմութիւնը և մենք պէտք է օգտուենք նրանց դասերից, փորձութիւններից։

Յեղափոխութեան առաջին գրոհը ուժեղ է, ազդու և արդասաւոր. սակայն, չը նայած այդ առաջին ահարկու թափին, չը նայած սուլթանական կամարիլլայի խելակորոյս նահանջին, չը նայած և այն ընդհանուր ու անօրինակ բերկրանքին, մարտական այն շղթայազերծ ցնծութեան, որ բռնկւել է սուլթանանիստ մայրաքաղաքից մինչև հեռաւոր ծայրերը—գտնւում են տակաւին հին բէժիմի երկրպագուների տխուր բանակում յանդուգն ոգիներ, որոնք խիզախում են դէմ գնալ յեղափոխական ճարակող հողմին և հաստատել իրենց դիրքն ու միջնադարեան առանձնաշնորհումները։ Ահա ալբան աւատականներ, ահա տաճիկ իշխանաւորներ և—մի մի զօրապետներ, վալիներ, բէգեր,—բոլոր նրանք, որոնց ծանր է հրաժարւել իրենց աւանդական „իրաւունքներից", որոնց գուրգուրել, հովանաւորել է նախկին բէժիմը և որոնց համար մահաբեր են նոր կարգերը... Նրանք բողոքում են, սպառնում են։ Ահա վանդէական ոռնոց է լսւում և հայկական բարձրավանդակից... Քրդերն են... ոչ, ի հարկէ, քիւրդ ժողովուրդը, այլ այն հացկատակ ու յանցագործ դասակարգը, որ սովորել է դարերից ի վեր անպատիժ զաւթել հպատակ „ռայեայի" արիւն-քրտինք աշխատանքը... Ինչպէ՞ս նա հաշտւի այն սարսափելի իրողութեան հետ՝ որ այսուհետև գրւած օրէնքը պիտի արգելէ նրան՝ ապրել թալանով, յափշտակութեամբ, որ նա պիտի սկսէ ընտելանալ ուրոյն, հալալ, ստեղծագործող աշխատանքի... Դա մի անլուր բռնութիւն է նրա „նւիրական", վաղուց հետէ սրբագործւած իրաւունքների վրայ, դա մի սոսկալի յեղաշրջումն է նրա կենցաղի, հոգեբանութեան, նրա բովանդակ աշխարհայեցութեան մէջ... Եւ նա էլ բողոքում է, սպառնում է։ Ահա բազմահազար լրտեսների վոհմակներ, որ երէկ կատարեալ տէր էին դրութեան. այսօր նրանք կծկւած իրենց դարաններում՝ վաղը կարող են պատեհ առիթով վերստին գլուխ բարձրացնել։ Ահա և արտաքին դաւերի ուրւականը,—մութ, կասկածելի շահատակութիւններ Ալբանիայում, Մակեդոնիայում—որոնց նպատակն է, անտարակոյս, հրդեհ բորբոքել ոչ ցանկալի սահմանադրութեան դէմ և ձուկ որսալ պղտոր ջրի մէջ։ Զը մոռանանք և այն՝ որ նոյն իրենց ժողովուրդների մէջ կան տականքներ, որոնք, աւա՜ղ, նոյնն են մնում ժամանակի ու տարածութեան այլ և այլ կէտերում, նման բնազդներով ու ախորժակներով, պատրաստ առատօրէն նիւթ մատակարարելու վանդէական պղտոր յորձանքներին... Այդ բոլորը կայ։ Այդ բոլորը պէտք է նախատեսնել։ Նզովելի բէակցիան ևս առասպելական հիդրային է նման, որի ամեն մի կտրւած գլխի տեղ նորն է բսնում։ Եւ միթէ՞ զարմանալի կը լինին հակահարւածները մի երկրում, որ դարերով մատնւած է եղել ամենաանարգ, ամենաբթացուցիչ գերութեան լծին, ուր դարերով մարդիկ սովորել են՝ շարժւել խալիֆների, շէյխիւլ-իսլամների և ամեն տեսակ „տէրերի" հրամանով, ուր քաղաքական, սոցիալական, կրօնա-բարոյական բոլոր գործօնները, ձեռք ձեռքի տւած, խեղդել են անհա-

տական ու խմբական ամեն տեսակ նախաձեռնութիւն՝ ազգաբնակութեան ճնշող մեծամասնութեան մէջ։

Պէտք է ուրեմն պատրաստ գտնել՝ վիժեցնելու յետադիմական ամեն կարգի ձեռնարկները, պաշտպանելու սահմանադրական ազատութիւնները, պաշտպանելու և ընտրողական ցանկալի սիստէմը և պարլամենտը։ Պէտք է կազմակերպուել։ Չը կայ ներկայումս մի այլ պահանջ, աւելի այժմէական ու հրամայական, քան կազմակերպուելու անհրաժեշտութիւնը։ Դժբախտութիւն կը լինի, եթէ չըմբռնենք այդ գերագոյն պահանջը։ Ոճիր կը լինի, եթէ գիտակցաբար ձեռքից թողնենք այնքան նպաստաւոր վայրկեանը, եթէ չ'օգտուենք նուաճուած ազատութիւններից—խօսքի, մամուլի, գումարումների—զարկ տալու համար հայ-ժողովրդական կազմակերպման գործին։ Եթէ ընդունում ենք, որ համաօսմանեան յեղափոխական բանակը զէնքը ձեռին ամեն վայրկեան պիտի հսկէ ու աստիճանաբար անդամալուծէ բոլոր հակադարձ շարժումները, ապա որքա՞ն աւելի մեզ հայերիս է անհրաժեշտ՝ բանակ կազմել—հզօր, ազդու, պատկառելի բանակ—„Երիտասարդ Թիւրքիայի“ կողքին և նրա հետ համերաշխ առաջ տանել յեղաշրջման դժուարին գործը, մինչև իր տրամաբանական վախճանը... Մենք, որ ամենից աւելի պիտի տուժենք բարբարոսութեան յարձակողական վերադարձից... Մենք որ 18 տարի շարունակ բաղձացել ու քարոզել ենք համագործակցութեան գաղափարը երկրի բոլոր թարմ ուժերի միջև... Այսօր մեզ կրկնակի առիթ է ներկայանում՝ գործով ցոյց տալու մեր անվերապահ պատրաստակամութիւնը, շաղկապուելու օսմանեան կռւող ու արդէն տիրական լէգէոնների հետ և ներդաշնակ ճիգերով թումբ կանգնելու բոլոր ազատասպան հեղեղների դէմ։

Կռիւը, վերջապէս, շարունակուելու է և սահմանադրական րէժիմի ներքոյ. Կռիւը՝ որ հայր է ամեն բանի, որ խթանն է առաջադիմութեան ու կատարելագործման... Կռուելու ձևերը միայն պիտի փոփոխուին. ռումբի, սրի տեղ՝ հրապարակ կը գան գրիչն ու խօսքը։ Դաւադրութեան տեղ՝ ընտրական քուէն։

Առ այժմ Բաստիլը թւում է խորտակուած։ Այն անօրինակ րէժիմը, որ ապշեցնում էր աշխարհը իր վայրենութեամբ և որի ճիրաններում խեղդամահ էր լինում՝ ստեղծագործական ամեն մի ճիգ, — գրեթէ իսպառ անդամալուծուած է։ Այն սարսափելի կամաբիլլան, որի քմահաճ հրամանների տակ դողում էր քսան միլիոնաւոր ազգաբնակութիւնը, այն մի բուռը թշուառականները, որոնց խղճի վրայ ծանրացած է լանկթամուրեան աշխարհագրող ոճիրների լեռը, փախան կամ հեռացան, ժողովուրդների թունոտ անէծքը տանելով իրենց հետ։ Իսկ Եըլդըզի գոռոզ հրամանատարը, նա որ քիչ առաջ խաղում էր լայնածաւալ կայսրութեան ճակատագրի հետ,—որի ամեն մի ժեստը հրաման էր, ամեն մի խօսքը՝ օրէնք,—այսօր զառանցում է իր մենաւոր ապարանքում, ծիծաղաշարժ ու արգահատելի, որպէս խաղալիկ յեղափոխութեան հզօր ձեռքերում, որպէս զոհ իր սեփական բռնակալութեան։

Մի խոշոր էտապ նուաճուած է։ Սակայն, միմիայն բացարձակ, միահեծան բռնակալութիւնը չէ, որ ծանրանում է աշխատաւոր ազգաբնակութեան ուսերի վրայ։ Միմիայն նա չէ պատասխանատուն ու մեղաւորը՝ ժողովրդի անսահման տառապանքների մէջ։ Ազատութեան րէժիմի տակ շուտով հրապարակ կը գան, կը փթթուին ու կը ծաւալուին նոր գործօններ—ցեղային, ազգայնական, դասակարգային—որոնք մասամբ կամ իսպառ կաշկանդուած էին հին կարգերի հեղձուցիչ մթնոլորտում։ Կուսակցութիւնները թափով բեմ կը նետուին իրենց յատուկ ծրագիրներով, իւրաքանչիւրը իբրև որոշ տարրի, դասակարգի ներկայացուցիչ։ Շահերը կը բախուին։ Պառաւ, զառամեալ Տաճկաստանը իր տեղը կունենայ ներկայացուցչական ժողովի մէջ և դեռ կը մղէ բազմաթիւ ճակատամարտներ՝ հին րէժիմը վերականգնելու, իր կորցրած դիրքը վերանուաճելու համար։ Բայց նոյնիսկ „Երիտասարդ Տաճկաստանի“ մէջ կան պէս-պէս շերտաւորումներ։ Այժմից արդէն ծայր են տալիս տարաձայնութիւնները երկրի քաղաքական կազմի, ազգայնական ու այլ հիմնական խնդիրների վերաբերմամբ։ Ոմանք համոզուած կենտրոնականներ են, ուրիշները՝ մի յայտնի ապակենտրոնացման կողմնակից։ Տարակոյս չը կայ, որ ազգային խնդիրը կոչուած է առաջնակարգ դեր խաղալու գալոց պայքարներում և նա պիտի լինի նոր պետական մեխանիզմի կարևորագոյն կնճիռներից։ Մենք չենք, որ անյաղթելի խոչընդոտներ պիտի յարուցանենք „Երիտասարդ Թիւրքիայի“ առջև, այդ դժուարին ճանապարհի վրայ։ Հայ ժողովուրդը երբեք չի սնուցել „անջատականութեան“ սին ծրագիրներ։ Հայ մարտական կազմակերպութիւնը երբեք չի քարոզել սեպարատիզմ։ Նրա նպատակը եղել է միշտ՝ ստեղծել Թիւրքահայաստանում ժամանակակից ոգով ներշնչուած մի իրաւակարգ, մի րէժիմ, հիմնուած ազատութեան, հաւասարութեան և ազգերի համերաշխութեան վրայ։ Նրա բաղձանքն է եղել միշտ՝ տեսնել նաև ամբողջ Տաճկաստանը վերակազմուած, վերանորոգուած նոյն մեծագործ սկզբունքներով։

Հայկական հարցը մինչև օրս միջազգային դիւանագիտութեան մի հարց էր,—այսուհետև նա դառնում է Տաճկաստանի ներքին, ուրոյն քաղաքականութեան մի խնդիր։ Համաօսմանեան պարլամենտն է, որ այսուհետև պիտի հանդիսանայ բարձրագոյն իրաւարարը՝ Բոսֆորից մինչև պարսկական ու ռուսական սահմանները, մինչև Եփրատի ու Վարդարի հովիտները, մինչև Տաւրոսի

լեռնաշղթան։ Նա է, որ կոչուած է լուծում տալու և ազգայնական կնճիռներին,—թիւրք, հայ, բուլգար, յոյն, սերբ, վալախ, քիւրդ, հրէա, ալբան, ասորի, արաբ և այլ տարրերի—օրինաւոր տենչանքներին։ Հսկայական, դժուարալոյծ մի հանգոյց։ Մեր տաքտիքը այդ մեծ ու ահաւոր խնդրի մէջ՝ պարզ է, որոշ։ Համաձայն մեր ծրագրի, աշխարհայեացքի, հրահանգուած հասարակական գիտութեան վերջին խօսքից, խրատուած առաջադէմ ազգերի արիւնալի փորձերից՝ մենք պէտք է համերաշխ ընթանանք այն տարրերի հետ,—մահմեդական և քրիստոնեայ—որոնք պաշտպան են ապակենտրօնացման սիստէմի, շրջանային ու տեղական ամենալայն ինքնավարութեան։ Այդպիսի մի կազմ և նա՛ միայն համապատասխան կը լինէր թէ ամբողջ երկրի և թէ նրա այլատարբ հատուածների ամենակենսական շահերին։ Այդպիսի մի կազմ և նա՛ միայն կը փրկէր երկիրը միանգամ ընդմիշտ անօգուտ ցնցումներից։ Առանց այդ պայմանի, առանց այդ անհրաժեշտ գրաւականի՝ ազգերի միացումը կը դառնայ ոչ թէ մի ներդաշնակ սինթեզ, համադրութիւն, այլ մեխանիկական մի պարզ խմբակցութիւն, մի կօնգլօմերատ՝ երերուն ու ալէծուփ... Միմիայն վարչական ապակենտրօնացման և կուլտուրական ինքնօրինութեան սիստէմի մէջ հայ ժողովուրդը հնարաւորութիւն կունենայ ազատօրէն, առանց վերուստ տեղացող ճնշումների, զարգացնել իր ազգային քաղաքակրթութիւնը, ապահովել իր ուրոյն անհատականութիւնը, իր տնտեսական-սօցիալական բարօրութիւնը և առաջադիմութեան ու լուսաւորութեան ջահ լինել Փոքր-Ասիայի խաւար մթնոլորտում։ Պետութիւնը պահպանելով հանդերձ իր ամբողջութիւնն ու միութիւնը, պիտի թոյլ տայ առանձին շրջաններին՝ կառավարուել համաձայն իրենց յատուկ կարիքների ու պայմանների։ Եւ անհրաժեշտ է սահմանել վարչական նոր կազմակերպութիւն՝ ազգագրական (էտնօգրաֆիկ) խարիսխի վրայ։

Ահա պահանջներ, որոնք այսօր աւելի քան հասունացած են բազմաչարչար ժողովուրդների կեանքում։ Ահա բաղձանքներ՝ համեստ, բանաւոր ու օրինաւոր՝ որոնց համար պէտք է այժմից իսկ անդադրում պրոպագանդ մղել և կազմակերպուել։

Ընկերնե՛ր, քաղաքացինե՛ր.

Ժամանակը չի սպասում,—շտապե՛նք։ Բոլոր թարմ ու գործօն ուժերը—դէպի հրապարա՛կ։ Պատմական մեծ վայրկեանի համար անհրաժեշտ է և մեծ սերունդ. ցոյց տանք, որ ընդունակ ենք կանգնելու այդ վայրկեանի բարձրութեան վրայ։ Պատմութիւնը և ինքը մեզ շրջապատող մահմեդական ազգաբնակութիւնը հայ ժողովրդին իրեն յատուկ ու պատասխանատու տեղն են սահմանում համասմանեան վերածնութեան գործում։ Դիտեցէ՛ք այն ինքնայորդոր ու խանդավառ ներբողները, որ ազատութեան դռռ թափօրներին հնչում են այսօր լաւագոյն ու շրջահայեաց թիւրքերի բերնից, ուղղուած հայ ժողովրդին, հայ գաղափարական երիտասարդութեան. „Դուք առաջինը պարզեցիք ապստամբութեան դրօշակը Փոքր Ասիայում և դուք անօրինակ զոհեր տուիք, որովհետև մեզնից շատ աւելի առաջ էիք գնացել, մենք մրափում էինք, դուք մեզ զարթեցրիք մահաբեր քնից“,—ահա մի ուշագրաւ խոստովանութիւն, որ մի սրտաշարժ նոյնութեամբ կրկնւում է ամենուրեք՝ Պոլսում, Զմիւռնիայում, Տրապիզօնում, Սալոնիկում... Դա հանդիսաւոր ու անդառնալի յարում է ազատագրական գաղափարին. դա միևնոյն ժամանակ հանդիսաւոր խորտակում է այն չարաղէտ նախապաշարումների, բոլոր այն սև անջրպետների, որ մի անհոգի բռնակալութիւն կառուցել էր մահմեդականի ու հայի միջև... Պատի՜ւ արթնացող ժողովրդին։ Ողջո՜յն խղճի ու բանականութեան յաղթանակին։

Արդարացնենք մեզ յատկացրուած այդ նուիրական առաքելութիւնը, շեշտենք մեր այդ ուրոյն դերը այսուհետև աւելի եռանդով, շեշտենք գործով։ Իսկ այդ դերի էական գծերից մէկն էլ այն է, որ մենք զինուած մեր սեփական իրաւունքների գիտակցութեամբ՝ խիզախել ենք միշտ արեամբ ու անբաւ զոհողութիւններով պաշտպան կանգնել այդ անկապտելի իրաւունքների, որոնք միանգամայն համապատասխան են քաղաքակրթութեան ճշմարիտ ոգուն, նրա պահանջներին ու հրահանգներին։ Մենք կարողացել ենք Իրաւունքի տրամադրութեան տակ դնել միշտ՝ նրա անհրաժեշտ ու յաւիտենական սպասաւոր—Ուժը։ Ուժ—ոչ միայն բարոյական, որ, աւա՜ղ, դեռ բաւական չէ ապահովելու իրաւունքի դատը մեր անիրաւ ու արհաւրալի աշխարհում... Հայ ժողովուրդը, եթէ նա յարգւում է իր պատմական միջավայրում—Տաճկահայաստանում, Անդրկովկասում—իր դրացիներից, թշնամիներից ու բարեկամներից,—դա ոչ միայն այն պատճառով է, որ նա հանդիսանում է մի անյաղթելի քաղաքակրթական-բարոյական ուժ, այլև շնորհիւ այն կարդինալ իրողութեան, որ նա կարողացել է հանդէս բերել իրական ուժ, մի կուռ ու կարող կազմակերթիւն, որ յանուն այդ արդար իրաւունքի՝ միշտ արիաբար կուրծք է տուել թշնամիներին...

Այո՛. և թող այսուհետև ևս մեր ժողովրդական իրաւունքների պաշտպանութիւնը լինի մեր կենտրօնական մտահոգութիւնը։

Թող միևնոյն ժամանակ ազգերի սերտ համերաշխութիւնը լինի մեր ամենօրեայ ճիգերի, մեր բովանդակ գործունէութեան անկիւնաքար։

Երկու դրութիւնները փոխադարձ, անհրաժեշտ լրացուցիչներ են և հայ քարոզիչը, պրոպագանդիստը

լեռնաշղթան։ Նա է, որ կոչուած է լուծում տալու և ազգայնական կնճիռներին,—թիւրք, հայ, բուլգար, յոյն, սերբ, վալախ, քիւրդ, հրէա, ալբան, ասորի, արաբ և այլ տարրերի—օրինաւոր տենչանքներին։ Հսկայական, դժուարալոյծ մի հանգոյց։ Մեր տաքտիքը այդ մեծ ու ահաւոր խնդրի մէջ՝ պարզ է, որոշ։ Համաձայն մեր ծրագրի, աշխարհայեացքի, հրահանգուած հասարակական գիտութեան վերջին խօսքից, խրատուած առաջադէմ ազգերի արիւնալի փորձերից՝ մենք պէտք է համերաշխ ընթանանք այն տարրերի հետ,—մահմեդական և քրիստոնեայ—որոնք պաշտպան են ապակենտրօնացման սիստէմի, շրջանային ու տեղական ամենալայն ինքնավարութեան։ Այդպիսի մի կազմ և նա՛ միայն համապատասխան կը լինէր թէ ամբողջ երկրի և թէ նրա այլատարբ հատուածների ամենակենսական շահերին։ Այդպիսի մի կազմ և նա՛ միայն կը փրկէր երկիրը միանգամ ընդմիշտ անօգուտ ցնցումներից։ Առանց այդ պայմանի, առանց այդ անհրաժեշտ գրաւականի՝ ազգերի միացումը կը դառնայ ոչ թէ մի ներդաշնակ սինթեզ, համադրութիւն, այլ մեխանիկական մի պարզ խմբակցութիւն, մի կօնգլօմերատ՝ երերուն ու ալէծուփ... Միմիայն վարչական ապակենտրօնացման և կուլտուրական ինքնօրինութեան սիստէմի մէջ հայ ժողովուրդը հնարաւորութիւն կունենայ ազատօրէն, առանց վերուստ տեղացող ճնշումների, զարգացնել իր ազգային քաղաքակրթութիւնը, ապահովել իր ուրոյն անհատականութիւնը, իր տնտեսական-սօցիալական բարօրութիւնը և առաջադիմութեան ու լուսաւորութեան ջահ լինել Փոքր-Ասիայի խաւար մթնոլորտում։ Պետութիւնը պահպանելով հանդերձ իր ամբողջութիւնն ու միութիւնը, պիտի թոյլ տայ առանձին շրջաններին՝ կառավարուել համաձայն իրենց յատուկ կարիքների ու պայմանների։ Եւ անհրաժեշտ է սահմանել վարչական նոր կազմակերպութիւն՝ ազգագրական (էտնօգրաֆիկ) խարիսխի վրայ։

Ահա պահանջներ, որոնք այսօր աւելի քան հասունացած են բազմաչարչար ժողովուրդների կեանքում։ Ահա բաղձանքներ՝ համեստ, բանաւոր ու օրինաւոր՝ որոնց համար պէտք է այժմից իսկ անդադրում պրոպագանդ մղել և կազմակերպուել։

Ընկերնե՛ր, քաղաքացինե՛ր.

Ժամանակը չի սպասում,—շտապե՛նք։ Բոլոր թարմ ու գործօն ուժերը—դէպի հրապարա՛կ։ Պատմական մեծ վայրկեանի համար անհրաժեշտ է և մեծ սերունդ. ցոյց տանք, որ ընդունակ ենք կանգնելու այդ վայրկեանի բարձրութեան վրայ։ Պատմութիւնը և ինքը մեզ շրջապատող մահմեդական ազգաբնակութիւնը հայ ժողովրդին իրեն յատուկ ու պատասխանատու տեղն են սահմանում համասմանեան վերածնութեան գործում։ Դիտեցէ՛ք այն ինքնայորդոր ու խանդավառ ներբողները, որ ազատութեան դռռ թափօրներին հնչում են այսօր լաւագոյն ու շրջահայեաց թիւրքերի բերնից, ուղղուած հայ ժողովրդին, հայ գաղափարական երիտասարդութեան. „Դուք առաջինը պարզեցիք ապստամբութեան դրօշակը Փոքր Ասիայում և դուք անօրինակ զոհեր տուիք, որովհետև մեզնից շատ աւելի առաջ էիք գնացել, մենք մրափում էինք, դուք մեզ զարթեցրիք մահաբեր քնից“,—ահա մի ուշագրաւ խոստովանութիւն, որ մի սրտաշարժ նոյնութեամբ կրկնւում է ամենուրեք՝ Պոլսում, Զմիւռնիայում, Տրապիզօնում, Սալոնիկում... Դա հանդիսաւոր ու անդառնալի յարում է ազատագրական գաղափարին. դա միևնոյն ժամանակ հանդիսաւոր խորտակում է այն չարաղէտ նախապաշարումների, բոլոր այն սև անջրպետների, որ մի անհոգի բռնակալութիւն կառուցել էր մահմեդականի ու հայի միջև... Պատի՜ւ արթնացող ժողովրդին։ Ողջո՜յն խղճի ու բանականութեան յաղթանակին։

Արդարացնենք մեզ յատկացրուած այդ նուիրական առաքելութիւնը, շեշտենք մեր այդ ուրոյն դերը այսուհետև աւելի եռանդով, շեշտենք գործով։ Իսկ այդ դերի էական գծերից մէկն էլ այն է, որ մենք զինուած մեր սեփական իրաւունքների գիտակցութեամբ՝ խիզախել ենք միշտ արեամբ ու անբաւ զոհողութիւններով պաշտպան կանգնել այդ անկապտելի իրաւունքների, որոնք միանգամայն համապատասխան են քաղաքակրթութեան ճշմարիտ ոգուն, նրա պահանջներին ու հրահանգներին։ Մենք կարողացել ենք Իրաւունքի տրամադրութեան տակ դնել միշտ՝ նրա անհրաժեշտ ու յաւիտենական սպասաւոր—Ուժը։ Ուժ—ոչ միայն բարոյական, որ, աւա՜ղ, դեռ բաւական չէ ապահովելու իրաւունքի դատը մեր անիրաւ ու արհաւրալի աշխարհում... Հայ ժողովուրդը, եթէ նա յարգւում է իր պատմական միջավայրում—Տաճկահայաստանում, Անդրկովկասում—իր դրացիներից, թշնամիներից ու բարեկամներից,—դա ոչ միայն այն պատճառով է, որ նա հանդիսանում է մի անյաղթելի քաղաքակրթական-բարոյական ուժ, այլև շնորհիւ այն կարդինալ իրողութեան, որ նա կարողացել է հանդէս բերել իրական ուժ, մի կուռ ու կարող կազմակերթիւն, որ յանուն այդ արդար իրաւունքի՝ միշտ արիաբար կուրծք է տուել թշնամիներին...

Այո՛. և թող այսուհետև ևս մեր ժողովրդական իրաւունքների պաշտպանութիւնը լինի մեր կենտրօնական մտահոգութիւնը։

Թող միևնոյն ժամանակ ազգերի սերտ համերաշխութիւնը լինի մեր ամենօրեայ ճիգերի, մեր բովանդակ գործունէութեան անկիւնաքար։

Երկու դրութիւնները փոխադարձ, անհրաժեշտ լրացուցիչներ են և հայ քարոզիչը, պրոպագանդիստը

պէտք է ասպարէզ նետուի, զինուած այդ երկու նշանաբաններով։

Ցանո՛ւն ժողովրդի! Աշխատաւոր ժողովուրդն է, որ իր ցաւերով ու իղձերով եղել է միշտ, լինելու է միշտ մեր սրբութիւն-սրբոցը, մեր պաշտամունքի առարկան։ Նրա անունով ենք հրապարակ եկել տասնեւութ տարուց ի վեր, նրա անունով են մեր բազմաթիւ հերոսները գնացել դէպի բանտ ու կախաղան, նրա համար է, որ բարձրացել են մարտիրոսութեան խարոյկները մեր արիւնաներկ հորիզոններում։ Նա է, այդ աշխատաւոր ընդհանրութիւնն է, որ կոչուած է մեր հայրենիքում և բոլոր ուրիշ հայրենիքներում իրականացնելու մարդկայնութեան ամենավսեմ իդէալը—ճշմարիտ հաւասարութիւնը, ազատութիւնն ու եղբայրութիւնը... Այդ ժողովրդին է, որ պիտի նուիրենք այսուհետև ևս մեր բոլոր ուժերը... Բարձրացնել նրա ինքնագիտակցութիւնը, ազատել նրան քաղաքական ամեն տեսակ ճնշող, բռնաւոր խնամակալութիւններից, կուռել նրա բազմապիսի հարստահարիչների, նրա աշխատանքը շահագործող ամեն տեսակ վամպիրների դէմ, պատրաստել նրան համաշխարհային սոցիալական մեծ ու վերջնական ճակատամարտի համար...

Կազմակերպուե՛ք, ընկերներ, քաղաքացիներ. դրա մէջ է ուժը ազատութեան և գրաւականը յաղթանակի։ Թող հայ ժողովրդի բոլոր անկեղծ բարեկամները համախմբուին ազատագրական դրօշակի շուրջը։ Եւ — ո՛չ մի չէզոք, ո՛չ մի անտարբեր հանդիսատես։ Այլ ևս չը կան գործելու նախկին արհաւրալի խոչընդոտները, չը կայ դրակօնեան սպառնալիքը ազատութեան զինուորի վրայ... Մինչև օրս՝ յաղթելու համար անհրաժեշտ էր յորդահոս արիւն, անհրաժեշտ էին անվերջ մահեր, բանտ ու տանջանք. այժմ վերացած է—գէթ առժամապէս—այդ սարսափելի ճակատագրականութիւնը, այժմ մթնոլորտը թեթևացած է, ճանապարհը հարթուած։

Յառա՛ջ, ընկերներ։ Դեռ պատնէշներ շատ կան գլորելու... Կազմակերպուե՛նք ստուար շարքերով ու դիմենք աստիճան առ աստիճան, էտապ առ էտապ, դէպի մեր անդրագոյն իդէալը — դէպի լիակատար ու միահեծան ժողովրդապետութիւն։

ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ
ԵՒ
ՀԱՅԵՐԸ

—

Թիւրքիան այնքան „թանզիմաթներէ“, „հաթթերէ“ յետոյ, որոնք Պենելոբի կտաւը կը յիշեցնէին, կամ երբ սուլթանները մէկ ձեռքով կուտային միւսով ետ կ՝առնէին, կարողացաւ վերջապէս,—վերջապէս, կ՝ըսենք, անյոռետես և անկեղծ յուսայայտութիւնով մը—խրոխտ ժէստով մը աւլել հին ըէժիմը, որուն համար ճէյմս Պրայս իրաւացիօրէն կ՝ըսէր թէ „աւազակներու կազմակերպութիւն մըն է“։ Շարագործները, աւազակները, այդ անորակելի, „անգտանելի“ նախարարութիւնը, որ այսօր գռեհիկ մարդասպաններու պէս բանտերու չորս պատերու մէջ կը տքան, կապիտալէն Տարպեան ժայռերուն տակ գլորած և բարոյական մեծագոյն պատժին ենթարկուած, կուգան հաստատել երկարատև և ողբերգական թագաւորութեան մը մռայլ ու չարաշուք պատմութիւնը կամ այն շէյքսբիրեան տռամը, որ կը խաղցուէր արհաւրալից մթութեան մը մէջ։

Մարդկային պատմութիւնը քիչ տուած է օրինակը այդպիսի վատասեռ և անմարդկային ըէժիմի մը, ուր մարդու բարոյականի անկումը, անագորոյն անխղճութիւնը այդքան ճնշող տպաւորութիւն գործած ըլլայ։ Ամբողջ նախարարութիւնը, վերէն վար, մէկ փառասիրութիւն ունեցած է՝ անսիրտ բռնաւոր մ՝ըլլալ, մէկ հեշտութիւն մը՝ վաւաշօրէն գազանանալ և մէկ իդէալ մը՝ հարստութիւն դիզել, երբ անդին ամբողջ ժողովուրդի մը փթիթ երիտասարդութեան արեան ծաղիկները կը խամրէին և ամբողջ սրտոտ ու կենսալից մտաւորականութիւն մը աքսորի կամ տարագրութեան լեղի հացը կը ճաշակէր, երբ երկիրը կ՝ամայանար ու կը տատասկէր։

Կարծես յատուկ խնամքով ու կանխամտածումով ընտրուած ըլլար այդ արիւնարբու վոհմակը, որ մասնաւոր ճարտարաւորութիւն ցոյց կուտար թշուառացնելու արհեստին մէջ։ Անոնք, առանց պուտ մը խղճահարութեան, ամենեցին ժողովուրդը, ոտնակոխ ըրին երկրին արժանապատուութիւնը և ազգին պատիւը։ „Աշխատեցէք հարստանալ“, այս եղած է, կ՝ըսէր հեղինակ մը, սուլթանի պատուիրանը բոլոր նախարարներուն, որը պաշտօնի կը կոչէր։ Չէ՞ որ աւազակ նախարարներէն մէկը խոստովանեցաւ, չը կրնալով իր ամօթը ծածկել, թէ „իրենց հարստութիւնը փատիշահին գիտութիւնովն էր“։

Օսմանեան պատմութեան սոյն հակամարդկային և մահաբեր շրջանը տխուր և դժնէ ցոլքով մը կը մահափայլի։ Կըսպասի որ օրէօր նոր յայտնութիւններ երևան գան ցոյց տալու համար չը տեսնուած թագաւորութեան մը մոլեգին շնականութիւնը և անօրէնութիւնները։

Հզօր, անշահախնդիր և անողոք Յեղափոխութիւնը հարկաւոր էր որ մաքրէր Օգիասի ախոռը։ Փրկարար ու մարդասէր Յեղափոխութիւնը հասաւ և փշրեց բռնակալութեան կուռքին կեղծ ու պատիր պաշտամունքը, անվարկեց դաւաճան և քմահաճ իշխանութիւնը։ Շարագործները անձնատուր եղան։ „Աշխարհի բոլոր սահմանադրութիւնները ոչինչ կ՝արժեն, եթէ անոնք բռնակալութեան ու կոտորածներու կազմակերպիչներու ձեռքը մնային“, կ՝ըսէր եւրոպական մեծ թերթ մը։

Աբդիւլ Համիդի անձնական քաղաքականութիւնը փոթորկին առջև հալեցաւ ինչպէս մառախուղի ծուէն մը և մինչև իսկ փատիշահը, սարսափահար, ընդառաջ գնաց վտանգին. — Յեղափոխութեան յաղթական գրոհին, երկրպագեց անոր, Ազատութեան նարօտը (cocarde) կրեց իր կուրծքին վրայ, յայտնեց, որ „խայինները ցարդ խաբեր էին զինքը... թէ ինք նախագահն է Երիտասարդ Թիւրքերուն... թէ ասկէ ետք ինք պիտի ապրի ժողովուրդին համար և ժողովուրդը իրեն համար“։ „Աշ-

խատինք միասին, ըսած է, ապագային Հայրենիքի վերաշինութեան համար“...

Այս բոլոր խօսքերը կարելի է ահով ստորագծել։ „Պատմութեան մէջ չէ տեսնուած, կ'ըսէ Թղթակից մը, այքան հաշտարար թագաւոր“։

Աբդիւլ Համիդ եկա՞ւ արդեօք այն ուշանուշ իմաստութեան կամ „իմաստուն որոշումին“, որը, Սահմանադրութեան ակամայ հայրութիւնը որդեգրելէ առաջ, պէտք էր հասկցած ըլլար, թէ „ժողովուրդներու լուութիւնը թագաւորներուն համար դաս մըն է“։

Յեղափոխութիւնը 32 տարեայ պատմութիւնը ունի իր ետև, որ կը թելադրէր լուրջ հեռատեսութիւն. ադոր համար շատ ճարպիկ և օրինական կերպով զինաթափ ըրաւ բռնակալութեան ուժը, մահամեռ ըրաւ յետաշրջումը, զանոնք վնասելու և հակահարուածելու անկարելիութեան մէջ դնելով։ Եվլդիզը, այդ խորհրդաւոր չարիքներու աւազակաբոյնը, կը պարպի բոլոր մարդակերպ գազաններէն, սուլթանը կը մնայ միայն փշրուած պատմութեան մը „յաղթուած“ հերոսը, որուն „փորձառութենէն“ — եթէ ոչ մաքիավէլականութենէն—կ'ուզէ օգտուիլ նոր ռէժիմը, և որ սակայն, պէտք է խոստովանիլ, չէ եղած յօգուտ երկրի բարօրութեան։ Ֆուատ փաշայի ազդու և հրայրոտ բացատրութիւնով, „Մարդ մը, որ արիւնին մէջ արդէն ունի բռնակալութիւնը, աւելի կեանքը վրայ կուտայ քան իշխանութիւնը“։ Շենք կարծեր որ բարբարոս արիւնը դարձեալ յաղթող հանդիսանայ։

Բայց ինչ ալ ըլլայ, այդ պալատը, օսմանեան տարեգրութիւններու մէջ, չարաշուք և եղեռնավիպական անուն մը պիտի թողու, թէև ժողովուրդը, զուսպ իր զայրոյթին ու յափշտակութեանը մէջ, չը փորձեց քարքանդ ընել և աղ ցանել անոր յատակին վրայ, ուր այնքան հեծեծանքներ մարած են և չը մտաբերեց մանաւանդ անոր մահաբոյր աւերակներուն վրայ խենթ պարը պարել և „Հայրենիքի Ազատութեան“ Մեծ Տօնը կատարել...

***

Սահմանադրական գաղափարը ալևոր Ասիոյ շրջանը ըրաւ, Թիւրքիա վերջին հանգրւանը ըլլալով ազատագրութեան ուղևորին։ Օսմանեան Սահմանադրութիւնը իրողութիւն մըն է այլ ևս։ Ազատութիւն, Հաւասարութիւն, Եղբայրութիւն Թիւրքիոյ հորիզոններուն վրայ այնքան քաղցր և ներդաշնակ կը հնչեն։ „Անշարժ ու հեստ“ կարծուած իսլամութիւնը քաղաքակրթութեան դիցուհին կը կանգնէ, կը մարդկայնանայ, դուրս գալով կրօնի խրթին և հակիմաստ կամ այլիմաստ պատուիրաններէն ու սուրաթներէն, որոնց մէջ գերած էին զինքը դարաւոր անգիտութիւնը, անհետաքրքրութիւնը, ծուլանուշութիւնը — *dolce far niente*-ն, և անօգուտ ու վայրապար հպարտութիւնը, և այս ամենուն վրայ կը սաւառնէր անողոք ճակատագրականութիւնը—գատէրը։

Գիտութիւնը—մարդասէր գիտութիւնը—որ հաւասարութեան ու համաշխարհային եղբայրութեան մեծ առաքեալն է, փշրեց հին մոլեռանդութեան կապանքները, բիւզանդական հեշտասէր ու եսական կարգուսարքը ու աւանդութիւնները, շեշտեց անհատական ու հաւաքական գիտակցութիւնները և վեր հանեց հեսին ու ընկերային առողջ և թեթևազատ փիլիսոփայութիւնը և մարդկօրէն ապրելու բանաստեղծութիւնն ու գեղեցկութիւնը։ Խարխուլ ու փլփլակ „հին Թիւրքիան“ տեղի կուտայ վերանորոգ և կենսառոյգ „Երիտասարդ Թիւրքիային“, որուն ճակատագիրը լծուած է հեռաւոր և բախտաւոր աստղին։

Թերևս այդ հզօր, անկաշկանդ ու իդէալական գիտակցութեան ռահվիրաները դեռ սակաւաթիւ բանակ կը կազմեն. ի՞նչ փոյթ, անոնք ամբոխին լիուլի հաւատքը ունին իրենց ետև, ինչպէս և բանակին ուժը, որուն մէջէն դուրս եկան Ազատութեան արժանաւոր հերոսները և մեծ ճիգերը։ Եւ ոչ մէկ ատեն զինուորականութիւնը—պէտք է ըսել ի պատիւ Թիւրքիոյ—այդքան հմայիչ չէր թուած, երկրի արտաքին թշնամիները յաղթահարելէ առաջ, երկրի ներքին դաւաճանները զգետնելով։ Զինուորին դերը կրկնակիօրէն բարձր եղաւ հոս։ Օսմանեան բանակը ժողովրդի Ազատութեան աշխատաւորը և պալլատիոնը կը հանդիսանայ և որ, արհամարելով կոյր կարգապահութիւնը, իր սուրը դարձուց արիւնռուշտ ռէժիմին դէմ, որ կ'անպատուէր երկիրը։

Բանակը ու ժողովուրդը՝ եղբայրակցելով փրկարար գաղափարին և երկրի մեծութեան համար, քաղաքացիական արութեան ու առաքինութեան ապացոյցը տին։ Յեղափոխութիւնը ժողովրդական կամքի տիրապետութիւնը հռչակեց։ Թիւրքիոյ մէջ այլ ևս հանրային կարծիք մը և կամք մը դարբնուած է, պէտք է առաջ քալել և նիւթական ու բարոյական աւերակներուն մէջ խաղաղութեան ու պարկեշտ աշխատութեան տաճարը կառուցանել ու երջանկութեան թեւականը բանալ այդ դժբախտ երկրին մէջ։ Ինչպէս Իտալիան, նոյնպէս Երիտասարդ Թիւրքիան կրնայ նշանաբանել *Turchia fara da se*։

***

Սակայն այսպիսի պատմական մեծ դէպք մը, որ մէկ օրուայ մէջ դարերու յեղաշրջումը կը կատարէ, չէ կարելի ըսել թէ այլևս Թիւրքիոյ էութիւնը ազատած է ներքին կամ արտաքին հակազդեցութիւններէ ու ցընցումներէ։ Թնութիւնը հոս գրեթէ ոստում մը կ'ընէ Յորդ ու վառ զգացումներու ետև կոպիտ ու հրամայական իրականութիւնը կայ, որը պէտք է նկատի ունենալ այդպիսի խառներանգ և այլաէտ երկրի մը մէջ։

Օսմանեան ներկայ Սահմանադրութիւնը տրամաբանական նմանութիւնը ունի 1876-ին հետ, նոյն ոգևորութիւնը, նոյն յարձակումը տիրող քաղաքականութեան դէմ։ „Իթթիհատ“ կը գրէր. „Դրան քաղաքականութիւնը ստախօսութեան քաղաքականութիւնն էր... ստախօսութիւնը վերջացած է... գործ պէտք է այլևս ելլն“։ Իսկ Համիդ խորհրդարանի բացման ճառին մէջ հանդիսաւորապէս կը յայտարարէր, թէ ազատութիւնն ու հաւասարութիւնը բացարձակ ստիպողութիւն մըն էին... թէ Սահմանադրութիւնը եղբայրութեան ու միութեան հիմերը պիտի դնէր Թիւրքիոյ ժողովուրդներուն մէջ...

1876-ի իդէալականութիւնը չը կրցաւ տոկալ մեծ փորձութիւններուն. Թիւրք ժողովուրդը չը կրցաւ ցոյց տալ որոշ պատրաստականութիւն իրենց պատմութեան այդ զարթնումը ապրեցնելու համար։ Այդ շրջանը ողբերգութիւնով մը վերջացաւ, որովհետև սահմանադրութիւնը ժողովրդի ծոցէն չէր բղխած։

Պէտք է ընդունիլ սակայն, որ ժամանակները փոխուած են, մտքերու ծալքերը աւելի պատրաստ են շնորհիւ քաղաքակրթութեան ու գիտութեան հետ շփումին։ Երիտասարդ Թիւրքիոյ ցանած սերմերը և Հայ Ժողովրդի Ազատութեան հոյակապ խոյանքը, որ մրրկահաւի մը ճիչը լսելի ըրաւ, և Թիւրքոյ գոյութեան սպառնացող միջազգային վտանգը պատրաստեցին նոր և ազատասէր սերունդը, որ այնքան վճռական և ճկուն կերպով, և առաջնորդուած ինքնապահպանութեան ու յառաջդիմութեան ոգիներէն և առանց գրեթէ մեծ դղրդումներու ու արիւնահեղ տեսարաններու, գլուխ հանեց մաքրագործումի ու փրկութեան այնքան կնճռոտ գործը և հիմքը դրաւ օսմանեան նորագոյն պատմութեան։

Նոր ռէժիմը բոլոր ազգերը համհաւասար հողի վրայ կը դնէ այլևս. „տիրապետ“ և „հպատակ կամ ստրուկ“ ցեղեր չը կան, այլ „քաղաքացիներ“՝ իրաւունքի և պարտականութեան միևնոյն սահմաններուն մէջ։ Ինչ, պատիւ, կեանք չեն ենթարկուիր այլևս կրօնական կամ ազգային կիրքերու կամ քմահաճոյքներու։ Ազատութեան արևը հաւասար կը ճառագայթէ բոլոր անոնց վրայ, որոնք օսմանեան դրօշին տակ կ'ապրին և կ'աշխատին լուսաւոր և ներդաշնակ իդէալով մը, գիտութեան ու բարօրութեան անդաստանները արօրել։ Մոնթէսքիոյի ճշգրիտ բացատրութիւնով կըստեղծուի „մտքի խաղաղութիւնը, որ առաջ կուգայ այն կարծիքէն՝ թէ ամեն մարդ իր անձի մասին ապահով է“։

Յուլիս 11/24-ը համապետական և հասարակական նոր և արգասաւոր ըմբռնումը և իդէալը մտցուց Թիւրքիոյ մէջ; ուր ազգերը յարգիր համախմբում մըն էին, սահմանագծուած էութիւններ, և որոնց անձնիւրը իր ինքնուրոյն և կղզիացած կեանքովը ու շահերովը կ'ապրէր։ Վարչական այդ դրութիւնը, որ դուրս չելաւ զինուորական պետութեան հասկցողութենէն, ստեղծած էր ցեղերու պատմական կեանքը, որ ունէր հեռանպատակ մը։ Թիւրքիան դաշտ մըն էր կամ տնկարան մը, ուր ազգայնական ոգին կ'աճէր ու կը զարգանար և որ միանգամայն մեծ վտանգն էր Թիւրքիոյ ամբողջութեան և նոյնիսկ գոյութեան։

Հարկաւոր էր ուրեմն սանձարձակ և կամայական ռէժիմին տեղ, որ „գլըճըմ հագգը“ ասացուածը նշանաբան ունէր և կը խրտչեցնէր բոլոր տարրերը, ստեղծուէր բարեկարգ կառավարութիւն մը, որ կարողանար վարչական խելացի ձևով մը հաշտեցնել բոլոր զգացումները և ձգտումները օսմանեան իշխանութեան և ամբողջութեան հետ։

Օսմանեան ամբողջութեան հարցը սկզբունքով հրուչակուած և ապահովուած է։ Ինչպէս այդ կը տեսնուի նոյնիսկ այսօր մէկ քանի քաղաքակիրթ երկիրներու մէջ՝ քաղաքական ուրիշ հայեցակէտ մը կը ներկայանայ։ Սահմանադրութիւնը յաճախ „օրինական“ կեղծիքին տակ մեծամասնութեան բռնակալութիւնն է, որ գրեթէ նոյն արդիւնքը կուտայ և թերևս նոյն բարդութիւնները կարող է ծագեցնել ապագային, երբ քաղաքական կուսակցութիւններ կազմուին և պայքարը սուր կերպարանք առնէ։

Թիւրքիոյ կողմէն համապատասխան կառավարական կազմակերպութիւն մը ընտրել էն խելացի քաղաքականութիւնը պիտի ըլլայ։ Վարչական ապակեդրոնացումը, որ ընդունուած է Թիւրքիոյ հին սահմանադրութեան մէջ իսկ, յարմարագոյն ռէժիմն է,—խաղաղութեան և վերջնական հաշտութեան կառավարութիւնը։ Քաղաքակրթութեան ու գիտութեան և անհատական ու հաւաքական գիտակցութեան դարը անխուսափելիօրէն հոդ կը ձգտի. ներդաշնակ համերաշխ կեանք ազատ ռամկավար ինքնաճանաչութեան մէջ, ուր ոսոխութիւնները կը հանգչին և նախաձեռնութիւնները թռիչ կ'առնեն, առանց կեդրոնախոյս ուժ մ'ըլլալու։ Եւրոպական գրեթէ բոլոր տէրութիւնները վարչական այդ սիստէմով կը կառավարուին, աւելի կամ նուազ չափով, և հետզհետէ այդ ձգտումը լայն և օրինաւոր չափեր կ'առնէ, նոյնիսկ դիմադրելու համար խորհրդարանական մեծամասնութեան. հին կեդրոնացումի կամայական և բռնազբօսիկ ռէժիմները վերջ կը գտնեն, որովհետև այդ կը պահանջեն դարուս լուսաւոր և ռամկավար ոգին և ժողովուրդներու շահերը։

Ֆրանսայի պէս համասեռ ժողովուրդ մը ճիգեր կ'ընէ, որ Ֆրանսան աւելի լայն և շեշտուած ապակեդրոնացումի վարչութիւնով մը օժտուի։ Սպանիան régionalisme-ի կը ձգտի և չ'ուշանար կը յաջողի։ Ռուսիա իր գերագոյն շահերու ապահովութեան և իր անսահման կայսրութեան անդորրութեան համար—եթէ չը ցանկար որ բաբելոնական պետութիւն մը դառնայ — ստիպուած է որդեգրել, կամայ ակամայ, ինքնավար ապակեդրոնացումի կառավարական ձևը, ինչպէս կը թելադրեն շատ մը ռուս ազատամիտ թերթեր. որովհետև պէտք է անդարձօրէն անցած համարել քաղաքակիրթ համարուած երկրի մը մէջ մէկ ցեղին միւսին վրայ հզօրագոյնի ճնշող տիրապետութիւնը։ Քաղաքակրթութիւնը և տնտեսական և քաղաքական շահերը և ինքնագիտակցութիւնը հետզհետէ կը կաթեցնեն մտքերու մէջ իմաստութեան զգացումը և խորհող ու հեռատես միտքը բանաւոր լուծումները կը փնտռեն պետական կազմերու և քաղաքական փիլիսոփայութեան։ Այսպիսի ճիգ մը և բարեկամեցութիւն մը կը գոհացնէ էն դժուարահաճները, ըմբոստ և տարուն ակ զգացումները, կ'ամրապնդէ նիւթական և բարոյական կապերը, կը ջնջէ ընդմիշտ անջատական ոգին իբր անպէտ և անիմաստ, երբ ոևէ ազգային տարր — առանց „նախախնամական կոչումի“ յաւակնութիւնը ունենալու—կը գտնէ քաղաքական և բարոյական բոլոր ապահովութիւնը, զարգացումը և ուր առաքինութիւնը կը դառնայ վարչութեան զսպանակը։

Իսկապէս կարելի է ըսել, որ այդպիսի երկիր մը կը կազմէ bund մը, ուր կարելի է համարձակօրէն ընդունիլ սա պարզ նշանաբանը. „ամենքը մէկին համար, մէկը ամենքին համար“։

„Անգլիա և Ռուսիա, կ'ըսէ „Տէյլի Թելէկրաֆ“, կը յուսան, որ նոր ռէժիմը պիտի վերակազմէ վարչութիւնը և կազմակերպէ ապակեդրոնացումի նոր սիստէմ մը, որ պիտի երաշխաւորէ բարենորոգումներու բարեբաստ կիրառութիւն մը“։

Մակեդոնացիք իրենց դաւանանքը յայտարարած են Պինչէվի բերնով, թէ մակեդոնական կազմակերպութիւնը „պիտի ջանայ մտցնել Սահմանադրութեան մէջ լայն ազատութենէն զատ նահանգային վարչութեանց սկզբունքը, օսմ. կայսրութեան ազգայնական համախմբումներու համաձայն սահմանագծելով նահանգները“։

Ապակեդրոնացումի մասին ամենքը թէ սկզբունքով և թէ իրականութեան մէջ համաձայն են, բայց Թիւրքիոյ համար այդպիսի համապատասխան ծրագիր մը, պէտք է ընդունիլ, բաւական բարդ աշխատութեան և ուսումնասիրութեան կը կարօտի։ Ապակեդրոնացումի ո՞ր ձևը։ Ահա խնդիրը։ Որովհետև ապակեդրոնացումը իր աստիճանաւորումները և տեսակէտերը ունի, որ հասարակ բանաձևով մը չէ կարելի լուծել՝ մանաւանդ Թիւրքիոյ պէս այլացեղ երկրի մը մէջ, ուր հակօրինութիւններ (antinomie) անխուսափելի կը թուին։

***

Յեղափոխութիւնը աւելով հին ըէժիմը, նոր դահլիճը կազմեց Քեամիլ փաշայի վարչապետութիւնով այն մարդոցմէն, որոնք բարոյական վստահութիւնը կը վայելեն երկրին։ Նոր դահլիճը այրէնգիմէն պիտի սկսի և արմատական բարենորոգութիւններու ձեռնարկէ։ Նախարարներէն մէկուն սրամիտ և իմաստալից բացատրութիւնով՝ նոր նախարարութիւնը „ճիշտ հինին հակառակը պիտի ընէ“։ Այսինքն հինը աւերիչ էր, նորը շինող պիտի ըլլայ։ Նոր դահլիճին ծրագիրին կէտերը այն են, ինչ որ կը պահանջէ երկրի մը նօրմալ և քաղաքակրթական բարգաւաճումը։ Ուղիներու և երկաթուղիներու շինութիւնը ստիպողական են իբր երկրի երակները՝ կեանքը շրջանառութեան մէջ դնելու և երկրին անսպառ հարստութիւնը շահագործելու համար։ Պարսկաստանի դժբախտութեան գլխաւոր պատճառներէն մէկն է ուղիներու բացակայութիւնը կամ անդրջրհեղեղեան վիճակը։ Պարսիկ յեղափոխութիւնը հէնց այդ պատճառով վիժեց։ Հանրօգուտ գործերու նախարարութիւնը իրաւացիօրէն կը շեշտէր այդ կէտի վրայ, իբր դուռը բոլոր միւս բարենորոգումներուն, ֆինանսական, հարկային դրութեան, հանրային կրթութեան ու լուսաւորութեան, որուն համար ժողովրդէն սիրուած նախարար մը, ամենէն եռանդուն բարեացակամութիւնը և վճռականութիւնը ցոյց կուտայ։

Հարկային սիստէմը, որ Թիւրքիոյ մէջ բնաւ տարբերութիւն չունէր աւազակութենէ, պէտք է դնել ամենաարդար հիմերու վրայ։ Հերիք է որքան լացուցին ու թշուառացուցին աշխատաւոր բնակչութիւնը։ Զարմանալի չէ, որ ժողովուրդը սահմանադրական ազատութիւն ըսելով հարկերու բարձում կը հասկնայ, որովհետև այնքան զզուած էր։ Ուտող ուտողի, գողցող գողցողի էր։ Հայ ժողովուրդը Հայաստանի մէջ երկու բռնապետութեանց տուրք կուտար,—կաշառքներէն զատ—պետութեան և քիւրդերուն։ Պէտք է անմիջապէս վերջ դնել այդ հարստահարիչ և հակամարդկային ու արիւնարբու կամայականութիւններուն, որոնց միջին դարերու մէջ իսկ հազուադէպ էին։ „Ներելի չէ, որ զինուորները շատցնելու դիտումով, կ'ըսէ Սէրվէթը Ֆինուն համիդիէներու մասին, խել մը աւազակները ժողովրդի վրայ արձակուին“։ Թիւրքիոյ հարկային ըէժիմին կը պատշաճի չինական սա բնորոշ պատմածքը.

Կոմֆիւկիոս, չինացի մեծ բարոյախօսը, մէկ օր իր աշակերտներով կը շրջէր երկրին մէջ, երբ տեսաւ կին մը, որ դառնապէս կուլար գերեզմանի մը վրայ։

— Տիկին, հարցուց, փիլիսոփան, դուք այնպէս մը կուլաք, որպէս թէ ձեր վիշտերը վերջ չ'ունենան։

— Այնպէս է, պատասխանեց կինը։ Նախ իմ պարնտատս այստեղ վագրէ մը կեր եղաւ, յետոյ ամուսինս, հիմակ ալ իմ զաւակս նոյն սև ճակատագրին զոհ գնաց։

— Ինչու՞, եթէ այդպէս է, հարցուց Կոմֆիւկիոս, չէք ձգեր այսպիսի վտանգաւոր երկիր մը։

— Որովհետև այստեղ, պատասխանեց կինը, կառավարութիւնը ծանր հարկերու տակ չի ճնշեր մեզ։

Չին փիլիսոփան դարձաւ իր աշակերտներուն. „Զաւակներս, ըսաւ, լաւ մտքերնիդ պահեցէք, կառավարական դրութիւն մը, որ կը ծանրանայ բնակիչներուն վրայ աւելի երկիւղալի է քան արիւնի ծարաւ վագր մը“։

Մենք կը կարծենք, որ նոր լուսամիտ նախարարութիւնը մարդկային քաղաքակրթական պատմութեան և բնաշրջումին մէջ, աւելի հզօր փաստեր և սկզբունքներ պիտի գտնէ արդարադատ և պարկեշտ կառավարութիւն մը կերտելու համար։

Նոր նախարարութիւնը պիտի ջնայ, Եւրօպայի հետ համաձայն, ջնջել capitulation-ը, որով եւրօպացիք բացառիկ օրէնքներ կը վայելէին Թիւրքիոյ մէջ։ Պէտք է ընդունիլ որ այդ պայմանագրութիւնը, որ յաճախ չարաչար գործածուած է, տրուած է սուլթան Սիւլէյմանի օրով, երբ Թիւրքերը իրենց զօրութիւնովը գինով, դիւանագիտական նրբութիւնները չէին փնտռեր կամ այդպիսի դաշինքի մը հետևանքները չը նախատեսեցին։ Երբ Թիւրքիան կազմակերպէ իր երկրի Արդարութիւնը և վստահութիւն ներշնչէ, ինքնին պիտի ջնջուին այդպիսի դրութիւն մը, ինչպէս և օտար նամակատուները, որոնք մնայուն յանդիմանութիւններ էին օսմանեան անկերպարան և մարթաւալ ըէժիմին։

Նոր ծրագրին մէջ ընդունուած է նաև քրիստոնեաներու զինուորական ծառայութիւնը, քանի որ անոնք այլևս քաղաքացիներ կը լլլան և կը վայելեն ազատութեան բոլոր բարիքները անխտիր։ Շատ բնական է և արդար, որ այդպիսի ժողովուրդ մը ջերմ և հայրենասիրական նախանձախնդրութիւնը ունենայ նաև իր երկրի պահպանումին։ Հայերը իրենց իդէալով ցոյց տուին թէ ինչ կը ցանկան Թիւրքիոյ համար, գործով ևս պիտի ապացուցանեն և պիտի գիտնան իրենց Թիւրք հայրենակիցներու հետ անձնուիրօրէն պաշտպանել այն հողը, որուն վրայ այնքան հերոսական արիւններ թափած են։ Հոս երկու կարծիք չը կայ։

Սակայն պէտք չէ զօրել անմիջապէս ժողովուրդ մը, որ արիւնաքամ եղած և իր բոյնը քանդուած է։ Պէտք է ժամանակ տալ, որ հայերը իրենց աւերակներէն ու մոխիրներէն վերածնին և Ազատութեան լոյսը ու շունչը ծծելով արիւն և կենդանութիւն գայ վրանին ու սիրեն երկրի նոր դրութիւնը։

Ներքին վարչական բարենորոգումներուն մէջ էական և կենսական նշանակութիւն ունի նաև կրթութեան և պետութեան աշխարհականացումը, որուն համար քաղաքական առաջադէմ կուսակցութիւնները պէտք է իրենց ծրագիրներուն մէջ կարևոր տեղ տան Թիւրքիան օժտելու համար ժողովրդական լայն և աշխարհիկ հաստատութիւններով։ Միդհատ փաշայի ներքին ծրագրին մէջ ևս օտար չէր այս կէտը։ Պէտք է դէն շպրտել „համիսլամական“ այլանդակ գաղափարը, որ յաղցաւ անպարկեշտ և անհարազատ ըէժիմը Եւրօպան վախեցնելու համար և որ գերման կառավարութիւնը ջանաց

իր օգտին գործածել։ Այդպիսի ձգտում մը իր դէմ պիտի հանէր եւրոպական շահերը, համաշխարհային վտանգ մը տեսնելով, ինչպէս դեղին վտանգը, այդպիսի խորթ և անբնական ձգտումի մը մէջ։ Օսմանցի ժողովուրդները ամեն բանէ առաջ մտածելու են իրենց երկրի նիւթական և բարոյական մեծութեան ու շահերուն, այդպիսի փորձանաւոր քաղաքական կեղծիքներու դիմելէ առաջ։

Թիւրքիան իր աշխարհագրական և տնտեսական գերազանց առաւելութիւններու բերումով, ուշ-կանուխ պիտի ունենայ ներքին հասարակական և տնտեսական հրատապ հարցերը և պայքարը։ Ազատութեան առաջին որոտումին „գործադուլներու“ պոռթկումը աշխատաւորներու որոշ գիտակցութիւնը կ'ենթադրէ։ Պէտք է ուրեմն երկիրը պատրաստուի և հետևի հասարակական կեանքի ճակատագրական և համաշխարհային երևոյթներուն, որոնք, հակառակ իրենց աղմկալից և պահանջկոտ բնաւորութեան, կը ձգտին հասարակութեան ընդհանուր բարօրութեան և մարդկային արդարութեան։ Հոս ևս անհատին կիրթ գիտակցութիւնն է, որ տարերային ուժի կը փոխուի և մեծագոյն դերը կը խաղայ երկրի ընդհանուր բարեշրջումին մէջ։

***

Թիւրքիոյ ներքին վտանգը կարելի է անցած համարել, եթէ աչալուրջ և խոհեմ վարչութիւնով մը օժտուի և արտայայտուած ճշգրիտ բացատրութիւնով. „Արդարութիւնը ազգին խիղճը“ դառնայ։ Սակայն արտաքին վտանգը կարելի չէ ըսել թէ բոլորովին անհետացած է։ Լեղի պատրանք մը պիտի ըլլար այդպէս ընդունիլը։ Ճիշտ է որ Թիւրքիոյ անակնկալ յեղաշրջումը խանգարեց Եւրոպայի պետութիւններու ծրագիրը Արևելեան հարցի մէջ, երբ Թիւրքիան „վառեկի պէս կը փետտէին առանց ձայն հանել տալու“։ Մակեդոնիոյ բարենորոգումներու խնդիրը մարեցաւ մեծ շարժման մէջ։ Եւրոպան ինքզինք գտաւ կատարեալ իրողութեան մը առջև և գոնէ, առերևոյթս, համակերպեցաւ „բարեացակամ“ չէզոք դիրք պահել, սպասելով Սահմանադրութեան բարիքներուն։ Ռուսիա իր սպասողական դիրքի մէջ մնալով հանդերձ, չ'ուզեր հրաժարիլ իր... պատմական միսիոնէն... խարդաւանքէն արևելեան քրիստոնեաներու հանդէպ։ Օ՜հ, այդ պատմական միսիոնը... խաչապաշտ Ռուսիային, որ կռօնոսի պէս կը սիրէ Արևելքի քրիստոնեաները և որուն երգիչն է չարագուշակ ագռաւը „Նովոյէ Վրէմիա“։ „Դրացի մեծ և փոքր պետութիւններու մրցութիւնը, կ'ըսէ դիւանագէտ մը, այս անգամ ալ նորէն այն վտանգը պիտի ըլլայ, որուն պիտի դիմէ Թիւրքիոյ նոր բարենորոգումը“։ Յոյս ունինք որ Թիւրքիոյ բախտը սոյն պատմական ալէկոծ հրանդանը անվտանգ պիտի կրնայ կտրել անցնիլ։

Թիւրքիոյ ուժեղացումը և բարեկարգութիւնը շատ հաշտ աչքով չի նայուիր կարգ մը տէրութիւններու կողմէն, որոնք քաղաքական և անտեսական նկատումներ ու շահեր կ'ակնկալէին անոր անիշխանական վիճակին մէջ։ Գերմանիան, սուլթանի բարեկամը — ոչ ժողովուրդին—կը տեսնէ քայքայումը իր հսկայ երազին, *drang nach Osten*-ին։ Պոլսոյ հակագերման ցոյցերը ապացոյց են, որ Եըլդըզի ապականութեան խրախուսիչ Գերմանիան պէտք է վերջացած համարի իր „պաշտպան խնամակալութիւնը“ Թիւրքիոյ վրայ և իր տընտեսական աշխարհակալութիւնը փոքր Ասիոյ մէջ։ Իրաւունք ունէր քեմալ փաշան, երբ կ'ըսէր թէ „Գերմանիան քիչ օգուտ ունեցաւ Թիւրքիոյ“։ Ի զուր գերմանացիք ինքնամխիթարութեան համար հայերուն կը վերագրեն Պոլսոյ հակագերման ցոյցերը։ Պէտք է վերագրել Գերմանիոյ անկուշտ, տմարդի և հակազատական քաղաքականութեան, որ ի վնաս Թիւրքիոյ ժողովուրդներուն եղած է։ Գերմանիան Թիւրքիոյ ապականութեան գործին մեծ արհեստաւորը եղած է։ Ան էր որ կաշառքներով ուզեց ձեռք անցնել երկրի հարստութեան աղբիւրները, կողոպտել երկիրը և անխնայօրէն։ Մեզ հասած հաւաստի աղբիւրէ տեղեկութեան մը համաձայն նոյնիսկ ինքը Գերմանիոյ կայսրը քանի ամիս առաջ սուլթանին խորհուրդ տուած է, որ „պինդ մնայ և չ'ընդունի սահմանադրութիւնը“, որովհետև վախճանը պիտի ըլլար տեւտոնական թալանարշաւին։

Ներկայ փափուկ պարագային խոհեմութիւն պիտի չ'ըլլար Պօսնա Հէրսէկի, Կիպրոսի, Եգիպտոսի ևն խնդիրներ յարուցանել, որ կարող է բարդացնել բարեկարգումի գործը։ Թիւրքիան արդէն շատ լայն է և անսահման, կը մնայ անձնուէր և եղբայրական ջանքերով, համերաշխ կեանքով մը ծաղկեցնել զայն։ Ցաճախ երկրի մեծութիւնը չէ որ արժէք ունի, այլ հոն թափուած ճիգը, աշխատանքը, մտաւոր, բարոյական ու նիւթական դրամագլուխը, որ կըստեղծէ երկրին մէջ—մանաւանդ Թիւրքիոյ պէս հիանալի երկիր մը—ներուժ գեղեցկութիւնը, հմայքը և բարեկեցութիւնը։ Օսմանցիները, ընդունուած բանաձևի մը համեմատ, կրնան այդ կորսուած գաւառներու մասին „մտածել, բայց չը խօսիլ“... գոնէ առայժմ։

***

Թիւրք-հայ եղբայրակցութիւնը արդէն կնքուած էր արեան դաշտին վրայ. Ազատութեան թևերուն տակ երկու ժողովուրդներու բարոյական կապերը աւելի պրկուեցան։ Երկու տարրերը կարծես կարօտալից ատելութենէ մը յետոյ իրար կը գրկէին սրտայոյզ գիրկընդխառնումներու մէջ։ Սգահանդէսները, որոնք կատարուեցան Պոլիս կամ այլուր երկու ազգերու նահատակներու նուիրական յիշատակը փառաւորելու համար և ուր Թիւրք սպաներ Թիւրք նահատակներու յիշատակին նուիրուած դաշնակցութեան պսակները կրեցին, պատմութեան մէջ չնաշխարհիկ երևոյթը և օրինակը պիտի մնան ժողովրդական սրտագին և ինքնաբեր ցոյցերուն։ Իրաւունք ունէին շատեր, երբ երազը և իրականութիւնը զգայախաբութեան մը պէս կը շփոթէին։

Ազատութեան կրօնը մոռցնել տուաւ հին հակայնութիւնները. մեր Թիւրք հայրենակիցները սրտազեղումի գերագոյն և անմոռաց քնարերգութիւնը ունեցան դէպի հայ ժողովուրդը արիւնլայ և հալածական։ „Դուք մեր երկրի Ազատութեան վէմերն էք, կ'ըսէին Երիտասարդ Թիւրքերը հայերուն ուղղելով իրենց խօսքերը։ Օսմանցիները ձեզմով կը պարծենան, երկիրը ձեզի շատ բան կը պարտի... Դուք Թիւրքերուն առաջնորդը հանդիսացած էք յառաջդիմութեան ու լուսաւորութեան շաւղին մէջ... Դուք մեզի հետ պիտի մնաք յաւէտ...

Հայերուն անունը ոսկի տառերով պիտի արձանագրուի օսմանեան տարեգրութիւններուն մէջ»... „Հայերը օսմանեան ժողովուրդներուն մէջ էն օգտակար տարրն են», կ'ըսէր հիւպատոս Էնվեր պէյ Մանչէսդրի խնջոյքին մէջ։ „Պարտինք նախ հայերուն երախտագէտ ըլլալ, կ'ըսէր Նազիմ պէյ Իզմիրի մէջ, ոչ թէ օսմանեան զինուորներուն, զի հայն էր, որ մեզ առաջնորդեց դէպի Ազատութիւն»։ „Կը վստահացնեմ ձեզ թէ, կ'աւելցնէր Վասֆի պէյ, որ հայերու արիւններն են, որ մեզ պարգևած են այս ազատութիւնը»։

„Հալալ օլսուն գանըմըզ», գոչած է հայ մը։

Այդքան անկեղծ և ոգևոր զգացումներէ յետոյ, ուր թիւրք ժողովուրդը վսեմութեան հասնող մարդասիրութիւնը ունեցաւ և հռչակեց ճշմարտութիւնը, „հալալ օլսուն գանըմըզ», պատասխանն էր ժողովուրդի մը, որ գիտէ գնահատել, իր անթիւ զոհաբերութեան մէջտեղ, իր հակառակորդին հոգիի և սրտի ազնիւ և միանգամայն վեհանձն թրթռումները։

Մեր թիւրք հայրենակիցները մէկէ աւելի գնահատումի և անձնուիրութեան հաւաստումներ տուին անցեալի ոճիրներուն վրայ դատապարտութեան սև կնիքը դնելով և անարգ սիւնի բևեռելով անոնց հեղինակները։ Պէտք չէ անտեսել սակայն այն դանդաղ, բայց հսկայ ճիգը, որ մեր թիւրք ընկերները ու հայրենակիցները կատարեցին այս մեծ օրուան համար։ Ի՞նչ շքեղ է այն դերը, որ Թրքուհին ունեցած է Ազատութեան յաղթանակին համար և ինչ մեծ ապագայ կարող է խոստանալ այդպիսի կանացիութիւն մը, որ Ազատութեան դահրամաններու պաշտամունքը ունի։

Եղած գովասանքները պէտք չէ փքացնեն հայերը, որոնք մնալու են միշտ գիտակից պարտականութեան համեստ զինուորները դէպի ընդհանուր հայրենիքի մեծութիւնը և դէպի իրենց հայրենակիցները։

Պոլսոյ հայ մամուլը գինովութեան շրջանին մէջ է՝ յախուռն ու հերարձակ, առանց հաստատ ուղղութեան և յաճախ առանց փափկանկատ հեռատեսութեան։ Մամուլի ազատութիւնը կեանքի և բարքերու ի՞նչ հակադրութիւններ երևան հանեց և ի՞նչ մաքրագործումներ կը կատարուին։

Օրմանեան, որ ինքզինք այնքան հանգիստ կը զգար Պատրիարքներու „փշոտ» գահին վրայ և կերարբ կեանք մը կը վարէր եպիկուրեան փիլիսոփայութիւնով մը և իր ազգականները կը խնդացնէր, կը մտնէ Անյուշ բերդը, միանգամ ևս հաստատելով մարդկային կեանքին մէջ ներգոյակ արդարութեան վախճանականութիւնը և աշխարհի բաներուն արդար հատուցումը։

Իզմիրլեան սրբազան կը վերադառնայ Պոլիս։ Հայ հողովուրդը իր քաջ հովիւին աննմանօրէն մեծաշուք ընդունելութիւն մը կ'ընէ։ Իզմիրլեան Պոլիսը ձգեց հռչակելով աշխարհի առջև սա մեծ ճշմարտութիւնը թէ „հոն, ուր Արդարութիւն չը կայ, ամեն հաւատարմութիւն կեղծ է»։ Հայոց սիրելի պատրիարքը այս անգամ յաղթական մուտք կը գործէ Պոլիս Արդարութեան և հայ ժողովրդի սիրոյ թևերուն վրայ։

Օսմանեան Ազատութիւնը հայ և թիւրք արիւններով նուիրագործուած անսասան կը մնայ և խրոխտ, որքան ատեն Արդարութեան պատանդանին վրայ բարձր կը մնայ ան։

ՈՂՋՈՒՅՆ

—

Գալիս են շտապով, կայծակի արագութեամբ հեռագիրները ձեզնից, թանկագին ընկերներ, ձեր ազատութիւնն աւետող կարճ տողերը։

Եւ համատաճկական խորտակուած բաստիլի մութ բացուածքներից ելնում են ձեր մեծ ու փոքր կարաւանները շարան-շարան դէպի լոյս, դէպի օդ, դէպի կեանք— Պոլսից սկսած մինչև Մարաշ, մինչև Վան։ Վան՝ վերջին կայանը ձեր տառապանքի, ձեր յոյսերի ու յոյզերի, չուկէտը ուշացած, բայց ամենասաւար կարաւանի։

Ո՞վ պիտի կարողանայ չափել այն մեծ խորհուրդը, որ տարիներով թաղուած է մնացել ձեր սրտում. ո՞վ պիտի վերադարձնէ ձեզ այն բոլորը, ինչ դուք թողեցիք մութ զնդանի կամարների տակ։ Եւ ինչե՞ր չը թողեցիք այնտեղ։ Ո՞րն ասեմ—ձեր ծաղիկ օրերը, առողջութիւնը, երիտասարդ տարիքը... Ցիշե՞մ արդեօք բանտում կորցրած ձեր մի ընկերոջ, տանջակից, բայց ներկայ բախտին ոչ մասնակից, որի շրթունքների վրայ — արշալոյսին, թռչունների առաւօտեան երգերի հետ—վերջին մրմունջն էր սառչում։ Հեռու ծննդավայրից, խոնաւ քարերի վրայ, նեղ ու կեղտոտ խցիկում, իր զգացմունքի տարտամ արտայայտութիւնն էր մրմնջում նա ձեզ—իր կտակը, որ մի օր, մի գեղեցիկ առաւօտ երբ դուրս գաք այնտեղից, տանէք ձեզ հետ այն ու թաղէք արեամբ ցողուած հողի մէջ՝ իբր ապագայ կեանքի կորիզ։

Այդ մրմունջի մէջ էր ամփոփուած բողոքը անարդարութեան դէմ, ստրկութեան դէմ։ Նա ինքը բողոքն էր, բռնութիւնը լափող սրբազան հուրը։ Նրա մէջ էր մթերուած յաւիտենական կարօտը դէպի իր ծննդավայրը, դէպի խնկաբոյր լեռն ու անուշ ջուրը, տենչը իր երկրի բարօրութեան. այնտեղ էր թրթիռը այրուած սրտի դէպի իր մտերիմը...

Եւ երբ դահիճը բաց արեց դռները, դուք դժուարանում էիք բաժանուել այն մութ խորշից, ուր ձեր ընկերոջ մահուան տխուր յիշատակներն էին ապրում. կանգնեցիք շուրջ-բոլոր լուռ ու վսեմ—ձեր երդումի խօսքը մի կաթիլ արցունքի հետ գնաց իբր պատասխան նրա վեհ տառապանքի և նրա հոգին հրճուեց։

Նա հրճուեց—գիտէր, որ իր ընկերները հէնց ինքն են, գիտէր որ դուք դուրս գալով կապանքից՝ ինքն է ազատ, գիտէր, որ մէկնումէկդ ամենքդ էք, գիտէր, որ միևնոյն սիրտը ամենքիդ համար է՝ ամենքդ նոյն ձրգտումով, նոյն ուխտով, նոյն անձնազոհութեամբ շաղկապուած։

Եւ իբր ուխտի պարտաճանաչ զինուորներ ցրուում էք ամենուրեք, ուր ցաւն ու վիշտն է բուն դրած։ Բռնութիւնն ու շղթան սասանած՝ դուք նրանց վրայ էք քայլում։ Դուք ուժեղ էք ձեր կամքով, ձեր գաղափարով և ձեր մեռնող ընկերոջ կտակով։

Դուք ուժեղ էք—բանտերի կործանումը ձեզ փաստ. դուք յաղթող էք՝ ձեր դահիճները բանտերումն են—ձեզ փաստ. դուք մեծ էք՝ ամբողջ Թիւրքիոյ ժողովուրդը ձեզ է փառաբանում—ձեզ փաստ։

Դա միայն առաջին քայլն է ձեր յաղթական գնացքի, առաջին չուն տարագնաց կարաւանի, առաջին

Թուիչքը ազատ մտածումի։ Ձեր վերջին հանգրուանը, հեռու տարածութեամբ, շատ մօտ է ժամանակով։ Անդուլ ջանքը կրճատում է ամեն ինչ. գաղափարը նրա յարաժամ խթանը։

Բռնութեան թափը ոչ ոք է զգացել ձեզնից աւելի. ազատութեան տենչն էլ ոչ ոք կարող է ունենալ ձեզնից աւելի։ Դուք զինուած էք կրկնակի, կոփուած բռնութեան հարուածներով՝ նրա դէմ կռուելու համար։

Գնացէ՛ք, ընկերներ, դէպի մեծ Աւերակները, տարէք ձեզ հետ մեռնող ընկերոջ կտակը և սերմանեցէք այն ամենուրեք։ Թող աւեր տեսարանները ձեզ չ՚ընկճեն, թող կորած սիրելիների բացը ձեզ չը խռովէ։ Աւերակները ձեր զոհողութեան խորհրդանշանն են։ Թափանցեցէ՛ք նրանց խորքը—շատ գանձ կայ այնտեղ թաղուած—այնտեղ է հայ ժողովուրդը. փարեցէ՛ք նրան, ոյժ տւէ՛ք և ոյժ առէ՛ք նրանից։ Նա ստեղծագործեց ձեզ. նա էլ ձեր գաղափարի պսակողն է լինելու։

Թող ոչ ոք ձեր մէջ չը տեսնի վհատութիւն, թող ամենքը հպարտօրէն նայեն ձեր բաց ճակատին և թող բոլորը ձեր հոգու մէջ կարդան իրենց անելիքը։

Գնացէ՛ք, ընկերներ. ձեր անցեալը ձեզ առաջնորդ, ներկան ձեզ խրախոյս, ապագան ձեզ հատուցում։

Շտապեցէ՛ք, աւերակները ձեզ են սպասում։

Ընկերական ողջոյնի համբոյրներով՝

Նախկին բանտարկեալ՝ ՄԱՐ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ „ԴՐՕՇԱԿԻՆ“

ՎԱՆ, 20 օգոստոս

250-է աւելի բանտարկեալներով ազատեցանք. սահմանադրութիւն և ընդհանուր ներում շնորհեցաւ։

ԱՐԱՄ

ՎԱՆ, 31 օգոստոսի

Կոմսը, Սարգիսը՝ ազատօրէն քաղաք մտան այսօր։ Այցելութիւն հայրենասէր հրամանատարին. համակրական խօսքեր փոխանակեցան՝ աշխատիլ Սահմանադրութիւնը միասին պահպանելու համար. սիրալիր ընդունելութիւն. այցելութիւն Վազգէնի և նահատակներու գերեզմաններուն։

ԱՐԱՄ

ՔՕՆՍՏԱՆՑԱ, 2 օգոստոս

Քոնսթանցայի հազարաւոր ցուցարարներ կը ծափահարեն և կը շնորհաւորեն իրենց բոլոր սրտով մեծութիւնը և յաջողութիւնը ձեր եռանդին, որ այնքան արժանաւոր կերպով և այնքան զոհողութիւններու գնով նպաստեց սոյն ցանկալի ազատութեան իրագործումին։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՕՍՄԱՆՑԻ

ՃԻՊՈՒԴԻ, 28 օգոստոս

Կը շնորհաւորենք կատարած գործը։ Կը մասնակցինք ազգային երջանկութեան։ Ցարգանք նահատակներուն։ Կեցցէ ազատութիւնը։

ՃԻՊՈՒԴԻԻ ՀԱՅ, ԹԻՒՐՔ, ԱՐԱԲ
ՕՍՄԱՆՑԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

I

Ընկերնե՛ր,

Ազատագրական շարժման առաջին յաղթանակը, արդիւնք տարիների չարքաշ աշխատանքի, անթիւ զոհերի և յեղափոխական արիւնոտ կռիւների, տարուած է.— Օսմանեան կայսրութեան մի ծայրից միւսը հնչում է Ազատութեան, Հաւասարութեան, Եղբայրութեան կոչը։ Երէկեան Հանրաբանտը վերածուած է ազատաշունչ երկրի։ Մռայլ, երկչոտ դէմքերի տեղ երևում են բերկրալից աչքեր. լռութեան փոխարէն թագաւորում է շարժում. ատելութեան ու քէնի աւերակների վրայ փչում է սիրոյ շունչը։ Եւ ժողովրդական ամենադժբախտ խաւերն անգամ, սովոր ստրկի համակերպութեան, անտեղեակ ազատութեան վայելքի, շարժւում, ծփում են ինչպէս փոթորկւած ալիքներ, նախանշանը քաղաքական աւելի երջանիկ օրերի։

Հանրային կեանքը կերպարանափոխւած է,—փողոցներում այլևս չը կայ երէկեան բռնապետութեան սոսկալի գործակալը,—Գաղտնի լրտեսութիւնը։ Բանտերը դատարկւած են։ Ազատութեան մարտիկները, ենթակայ քաղաքական բանտարկութեան դժոխային րէժիմի, ազատ օդում են, գրկախառնւած ժողովրդի հետ, որին նրանք այնքան անձնւիրաբար ծառայեցին։ „Դէպի բանտ“ գոչողները իրենք են գնում բանտերը։ Արտասուք տարածողները իրենք են ողբում։ Շքազարդ փաշաներն ու մինիստրները, երէկւան ամենակարող տէրերը արքունիքի, կառավարութեան և երկրի, սողում են Յեղափոխութեան ոտքերի տակ, փախուստ տալիս ժողովրդական ցասման ճանկերից։ Դերերը փոխւած են, և սկսւած է մի աւերմունք այն բոլորի, ինչ յուլիսի 10-ին, շնորհիւ բռնապետական րէժիմի, նկատւում էր անսասան, անփոփոխ, յաւիտենական իսկ։

Սակայն լայնատարած բերկրանքի ընթացքում—ցաւ է ասել, և չենք թագցնում—հին րէժիմի յիշատակներից սարսափած ժողովուրդների տարբեր խաւերից դուրս են թռչում տարակուսանքի և երկիւղի տխուր բացականչութիւններ՝ „Երկա՞ր պիտի տևէ արդեօք“.— անարգալից խօսքեր նորաբողբոջ Ազատութեան համար, թոյն՝ յեղափոխական անդրանիկ յաղթութեան, խօսքեր, որոնք րէակցիոն տարրերի ուժը կարող են կազմել, հիմքը նրանց քաղաքական նենգ ծրագիրների։

Յեղափոխական ընկերնե՛ր,

Դուք որ ազատագրման գործի ու աշխատանքի ամբողջ գիտակցութիւնն ունիք, պարտաւոր էք, առանց ժամ կորցնելու, ըմբոստանալ այդ տատանման ու թերահաւատութեան դէմ ձեր ամբողջ ոյժով, ձեր ձեռքերի տակ եղած բոլոր միջոցներով։ Մի երկիր — ասացէք ամեն տեղ և ամենքին—որ այդքան զոհեր տւեց ազատագրութեան—հայ ժողովուրդը իր քսանամեայ կռւով ու զոհերով, Մակեդոնիան՝ իր լաւակազմ պայքարով, Արաբիան՝ իր հուժկու ապստամբութեամբ և Երիտասարդ-Թիւրքիան՝ իր լաւագոյն անդամների ողբերգական կորստեամբ,—ուր ամբողջ պատմութիւնն ու կեանքը վերածւած էին համատարած տանջանքի, լացի ու ա-

նէծքի—չէ կարող, իրաւունք չունի ենթարկել թերահաւատութեան և տատանման, և կանգնած պիտի մնայ, մանաւանդ յաղթութեան այս յուսատու օրերին, իր ուժի ու կռուի հպարտ գիտակցութեան վրայ, տէրը՝ իր ապագայի, տնօրինողը՝ իր բախտի։

Ազատութիւնը արեամբ գնեցինք։ Արեամբ էլ կը պաշտպանենք, եթէ տխուր հարկը կը ներկայանայ։ Նա մերն է։ Ոչ ոք նրան յետ խլել չէ կարող, որովհետև ոչ ոք իր կամքով չէ շնորհել։—Սա պիտի լինի հանգանակը ամբողջ ազգաբնակութեան, խորարմատ համոզումը այն բոլոր ազգերի, որոնց այսօրուան անսահման ցնծութիւնը՝ երէկեան անսահման տանջանքի արձագանքն է միայն։

Սրտապնդուած առաջին յաղթանակի այս խրախուսիչ փաստով, ոգևորուած բռնալուծը թօթափող բոլոր ազգերի համերաշխութեան մեծ գաղափարով, յափշտակուած տարբեր ցեղերի ու կրօնների, բայց նոյն ցաւերին ենթակայ 24 միլիօն ազգաբնակութեան վաղուան երջանկութեան հսկայ հեռանկարով, լի յարգանքով դէպի նահատակ-զոհերը, որոնք իրենց ծանօթ ու անծանօթ դամբարաններից խրախուսանքի դասեր են տալիս,—մնանք ամուր մեր յաղթավայրի վրայ, մնանք անսասան, աներկբայ, լի անճկուն կամքով, հպարտ այն գիտակցութեամբ, որ Ազատութեան դրօշակը տնկուած է Երկրի ծոցի մէջ մեր աշխատանքով, և նրան խլել, պոկել, վայր գլորել, չէ կարող քաղաքական ոչ մի մանեօվր, ոչ մի քմահաճոյք, ոչ մի խարդախ ոյժ։

Սա պիտի լինի, ընկերնե՛ր, ձեր քարոզի, պրոպագանդի, ձեր ներշնչումների այսօրուան հիմնաքարը, ձեր ոգևորութեան ու ազդեցութեան գլխաւոր նպատակակէտը։

Պայքարով, հաւատով ու համերաշխութեամբ ազատամարտի վտանգաւոր պտոյտներով անցանք։ Արեան հովիտները մեր յետին են։ Մեր առջևը, մերձաւոր հորիզոնի վրայ, Ազատութեան արշալոյսն է փայլատակում։ Արիւնոտ կռուի բոպէներին, վհատութիւն չը ճանաչեցինք. Նրան չը պիտի ճանաչենք, և չենք ճանաչի այս գրաւիչ օրերին, երբ երէկեան հակայեղափոխականներն անգամ, մեծից մինչև փոքրը, իրենց կրծքին Յեղափոխութեան սրբանկարն են կրում, գունաւոր ժապաւէնը՝ Ազատութեան, Հաւասարութեան և Եղբայրութեան, մի նոր ու անսպառ աղբիւր գաղափարական պայքարի։

Կեցցէ՛ Յեղափոխութիւնը, կեցցէ՛ ազգերի Համերաշխութիւնը.

Կեցցե՛ն ազատագրուած Թիւրքիայի բոլոր ժողովուրդները։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՕԼՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

1908 յուլիս 30, Կ Պոլիս

II

Հայրենակիցնե՛ր,

Տասնեակ տարիներ տանջակից ձեզի ու բախտակից ձեր արիւնոտ ճակատագրին, մենք չի դաւաճանեցինք ձեզ ու չի մոռցանք ձեր տառապանքը. բողոքը մեր ատամներուն տակ ու ազատութեան բոցը մեր կուրծքին՝ նետուեցանք ամենէն անգութ պայքարին մէջ և յարձակումը կրկնեցինք անդուլ, անդադար՝ Բռնակալութեան պարիսպներուն և անոնց անողոք բերդապահներուն դէմ։

Ինկան մեզմէ սխրալի անթիւ դիւցազներ ու անհամար կտրիճներ.—բայց մենք չի յուսահատեցանք։

Մեզի դէմ զինուեցան խաւարի ու մահուան բոլոր զօրութիւնները. և անօթութիւն ու բանտ, կախաղան ու գերեզման, նոյն իսկ հարազատ եղբօր արհամարհանքն ու թերահաւատ լքումը շրջապատեցին մեզ ամեն կողմէ.—և սակայն շարունակեցինք մենք կռիւը։

Ազատութեան Գաղափարը մնաց անսասան և Յաղթութեան հաւատքը անխոցելի՝ մեր շարքերուն մէջ։

Եւ մեր Գաղափարը յաղթանակեց ու մեր Հաւատքը կը ծաղկի ահա։

Դեռ երէկ բազմաթիւ էին անոնք, որ կը քարկոծէին մեր յոյսն ու մեր զոհողութիւնը. դեռ երէկ հազարաւորներ էին մեր հակառակորդները, որ կը տարակուսէին մեր գործունէութեան ու մեր անձնազոհութեան վրայ։

Եւ երբ Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ հաւատարիմ Համերաշխութեան և Ազգերու եղբայրութեան իր հիմնական սկզբունքներուն, արհամարհելով այնքան արգելք ու բազմադիմի դժուարութիւններ, վերջապէս կը յաջողէր ներկայ տարուան սկիզբները հայ և թիւրք ընդդիմադիր տարրերու Քօնկրէն գումարել Փարիզի մէջ, ի՛նչ հալածանք, ի՛նչ նախատինք և կրքերու ի՛նչ փոթորիկ իր դէմ անարժան հակառակորդներու կողմէ։

Եւ ահա Այսօրը կուգայ վկայել, թէ պարապ վատնուած չեն ո՛չ մեր արիւնը, ո՛չ մեր ճիգը, ո՛չ մեր անձնուիրութիւնը։

Այսօրը կուգայ վկայել, թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ միակը հայ կազմակերպութեանց մէջ, ստեղծելով Թիւրքիոյ բոլոր հարստահարուող ու իրաւազուրկ տարրերուն ներկայ զինակցութիւնը՝ ո՛չ միայն նպաստեց պատմական այս փառաւոր դարագլխուն բացման, այլ և հիմը դրաւ մեծ ու ստեղծագործութեան յղի ապագայի մը։

Թող ուրեմն անհետանա՛ն ինքնակալութեան բոլոր վատանուն մնացորդները ժողովուրդներու գիտակցական զարթնումին և եղբայրական դաշնակցութեան առջևէն.

Թող ուրեմն Արդարութեան, Ազատութեան և Իրաւահաւասարութեան գաղափարը գրաւէ՛ աւելի ու աւելի Թիւրքիոյ բոլոր ազգերը.

Թող ուրեմն մեր արիւնն ու արցունքը խեղդէ՛ Բռնաւորները և լայնատարած Երկրին բոլոր անկիւններէն ու միլիօնաւոր շրթունքներէն բարձրացող ցնծութեան, ազատութեան և սիրոյ աղաղակները դատապարտութիւնը, գերեզմանն ըլլան սև Անցեալին.

Եւ թող Հ. Յ. Դաշնակցութեան՝ Ազատութիւն, Արդարութիւն և Ազգերու Համերաշխութիւն նշանաբանը, նշանաբանն ըլլայ նաև Երկրին բոլոր ազատասէր զաւակներուն, արիւնաքամ բոլո՛ր աշխատաւոր ժողովուրդներուն։

Կեցցէ՛ Յեղափոխական Գաղափարը,

Կեցցե՛ն ազատ ժողովուրդները և ազատ Հայրենիքը,

Կեցցէ՛ Հայ Յեղ. Դաշնակցութիւնը։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՕԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Կ. Պոլիս, 2 օգոստոս 1908

III

Դաշնակցութեան Կ. Պոլսոյ Պատասխանատու Մարմինը, նկատի ունենալով սահմանադրական կարգերու ներմուծմամբ ստեղծուած նոր պայմանները, կը յայտարարէ հետևեալը.

Ա) Այն բոլոր ընկերները, որոնք կը պատկանէին կազմակերպութեան, բայց բանտարկուած կամ աքսորուած էին, այժմ ազատ ըլլալով, պէտք է շտապեն անմիջապէս մտնել պատկանեալ խմբերու կամ կոմիտէներու մէջ։

Բ) Բոլոր խմբերն ու կոմիտէները պէտք է վերակազմուին՝ համաձայն Դաշնակցութեան „Կանոնագրի“ (որոնց օրինակները կրնան խնդրուիլ Արևմտեան Բիւրոյէն կամ կեդրոնական կոմիտէներէն)։

Գ) Կուսակցութեան մարմինները հրամայական պարտք ունին, առանց յապաղելու, ձեռնարկել մարտական ու քաղաքական խմբերու կազմութեան, իրագործելու համար այն ձեռնարկները, որոնք կրնան ծրագրուիլ Պատասխանատու Մարմիններու կամ կեդրոնական կոմիտէներու կողմէ։

Դ) Ջեղծումներու ու թիւրիմացութիւններու տեղիք չը տալու համար, բոլոր մարմինները պարտաւոր են ղեկավարուիլ „Կանոնագրով“, թէ իրենց ներքին յարաբերութիւններու, թէ ուրիշ ձեռնարկներու մէջ, և թէ դրամական հարցերու վերաբերմամբ։

Առիթէն կ՚օգտուինք յիշեցնելու բոլոր ընկերներուն, որ համաձայն Ընդհանուր Ժողովի շեշտած ցանկութեան, կազմակերպութեան շարքերու մէջ չը պիտի ընդունուին այնպիսիները՝ որոնք իրենց անձով կամ քայլերով կրնան արատ բերել Դաշնակցութեան անուան և հմայքին։ Ընդհակառակը, անշիտակ և կազմակերպութեան անունը շահագործելու միտումներ ունեցող անձինք, ո՛վքեր և ըլլան, պիտի հեռացուին կազմակերպութեան շարքերէն։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՕԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Կ. Պոլիս, 3 օգոստոս 1908

IV

Հ. Յ. Դաշնակցութեան Պատասխանատու Կոմիտէն Տաճկաստանի հայ ժողովրդին բացառիկ վիճակը ի նկատի ունենալով, շրջաբերական յայտարարութիւնով մը կը պահանջէ սահմանադրական կառավարութենէն հետևեալ միջոցներու իրագործումը.

1) Ազատ երթևեկում հայկական նահանգներու մէջ։

2) Վերադարձումը հայ գիւղացիներու հողերուն, որոնք վերջի ժամանակներս գրաւուած էին։

3) Ջնջում 1895—1908 տարիներու ընթացքին մէջ հայ ժողովրդի դէմ ստեղծուած հալածողական միջոցներուն։

4) Ազատարձակումը քաղաքական հայ բանտարկեալներուն և վերադարձ քաղաքական բոլոր աքսորեալներուն։

5) Վերադարձ հայ գաղթականներուն, որոնց թիւը կ՚անցնի 90 հազարը։

Ասոնցմէ զատ Դաշնակցութիւնը, որ Թիւրքիոյ մէջ կը գործէ 18 տարիներէ ի վեր, որոշած է միւս ազգութիւններու պատկանող կուսակցութիւններուն հետ համերաշխաբար ի գործ դնել բոլոր իր ուժը, ձեռք բերելու համար կատարեալ ազատութիւն ընտրութիւններու ատեն և սահմանադրութեան վերաքննութիւն վարչական ապակեդրոնացման ուղղութիւնով։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՕԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Ցաւելով կ՚ըսենք, որ մեր կոմիտէներու հասած տեղեկութիւնները տգեղ և ստորին երևոյթի մը գոյութիւնը կը հաստատեն, որուն դէմ յաճախ բողոքած են Յեղափոխական կազմակերպութիւնները։ Անբարեխիղճ, շահասէր և առիթէն օգտուելու ընդունակ անձեր՝ մայրաքաղաքիս և գուցէ գաւառներու մէջ ալ, սկսած են իրենք զիրենք Դաշնակցական ներկայացնել, այս կամ այն կոմիտէի պատկանող և սոյն անունին տակ կը համարձակին դիմումներ ընել, դրամ պահանջել և նոյն իսկ սպառնալիքներ ընել քաղաքացիներուն։

Կազմակերպութիւնը վճռած է իր սաղմին մէջ իսկ խեղդել սոյնօրինակ զեղծումները, թոյլ չը տալ որևէ խաբէութեան արարքի և իր կանոնագրին վրայ յենած՝ կը յայտարարէ.

1) Դաշնակցութեան անունով խաբեբայութիւն ընողները պատասխանատուութեան պիտի կանչուին։

2) Դաշնակցութեան անունով դրամաշորթութիւն ընողները, ո՛վ որ ալ ըլլան, խստօրէն պիտի հալածուին։

3) Դաշնակցութեան անունով սպառնալիքներ ընողները իբր զեղծարար անխնայ կերպով պիտի պատժուին։

Այս առիթով ի գիտութիւն ամբողջ հայ ժողովուրդին կը ծանուցանենք, որ այս տեսակ դէպքերու ժամանակ իրենց գանգատները անմիջապէս մեր կոմիտէներուն հաղորդեն։

Կը սիրենք յուսալ, որ այս նախազգուշացումը պիտի կրնայ այդ խաբեբաները սանձել. հակառակ պարագային ստիպուած պիտի ըլլանք ամենախիստ միջոցներու կիրառմանը դիմել, պահպանելու համար Յեղափոխութեան անունը միշտ մաքուր, անբիծ և վստահելի։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՕԼՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Կ. Պոլիս, 8/21 օգոստոս 1908

ՎԵՐՋԱՊԷՍ...

Սառոյցը կոտրուած է և յորդացած գետը ազատուում է կաշկանդիչ կապանքներից, լայնօրէն ողողելու համար արիւնազանգ երկրի արգաւանդ դաշտերը և կեանք վերստեղծելու աւերակներուն։

Սուլթանը կարգադրել է պատգամաւորական ժողով գումարել։ Թիւրքը ազատագրական շարժումը հասնում է իր նպատակին։ Խլրտումն իշխում է զինուորական շրջանում։ Նա շուտով կը վարակէ ուրիշ լայն խաւեր։ Բռնակալութեան պարիսպներն են, որ ընկնում են կամովին։

Մինչև այժմ կարելի էր բռնանալ ու ճնշել՝ յենուելով զինուորական ոյժի և ժողովրդի տգիտութեան վրայ։ Մինչև այժմ կարելի էր անպատիժ մորթել, աւերել և կողոպտել։

Բայց ահա ըմբոստութեան գրոհի առաջ տեղի է տալիս կարմիր գազանը. Նրա միահեծան իշխանութիւնը տատանուում է և մօտ է կործանման։ Բռնութեան նեցուկը՝ զինուորական ոյժը, ձգտում է յենարան դառնալ արդարութեան և իրաւակարգի։

Զուր չանցաւ թափուած արիւնը։ Տասնեակ տարիների ընդհարումները, զինուած և անզէն բողոքները, ժողովրդի անլուր տառապանքը և գերմարդկային զոհողութիւնները իրենց պտուղն ունեցան վերջապէս։

Հ. Յ. Դաշնակցութեան փայփայած երազները իրականութեան սահմանն են թեւակոխում։

Հնչել է ազատութեան ժամը...

Գիտենք, որ մեզ սպասում են նոր տառապանքներ և ծանր փորձութիւններ։ Ռուսաստանի օրինակը դեռ թարմ է մեր յիշողութեան մէջ։ Պարսկաստանի դէպքերը մեզ ցոյց են տալիս, թէ ի՛նչ է սահմանադրութիւնը ասիական մի կիսակիրթ երկրում։ Նոր ջարդերի, նոր աւերի և նոր կողոպուտի ուրուականը խռովում է մեր երևակայութիւնը։

Բայց և այնպէս մեր հայեացքը յուսալից է դէպի ապագան։ Անվերադարձ կորուստի է մատնւում Մեծ Մարդասպանի կարմիր ռեժիմը։ Երկիրը մտնում է բնականոն զարգացման ուղին։ Յարակից բոլոր ցնցումները, որքան էլ զօրեղ՝ բայց ժամանակաւոր և վաղանցուկ կը լինին։

Գործող յեղափոխական կուսակցութիւնները պէտք է որոշեն իրենց բռնելիք ուղին, ձևակերպեն իրենց նւազագոյն պահանջները և համերաշխաբար կազմակերպեն ժողովրդի ընդդիմադիր ոյժը, այդ պահանջների գոհացումն ապահովելու համար։

Ընկերնե՛ր. բացւում է նոր և արդիւնաւոր գործունէութեան մի լայն ասպարէզ։ Ամենից աւելի այսօր է, որ պէտք է սերտօրէն կապւենք իրար, դիմագրաւելու համար ամեն հնարաւոր փորձութեան։

Տասնեակ տարիներ շարունակ մեր ուղղած կոչերը Թիւրք ընդդիմադիր տարրերին անցեալ տարի Փարիզի ժողովում դարձան մի դաշինք և այս տարի՝ կենդանի և լայն գործ։ Մեր ընդարձակ պատրաստութիւնները Վասպուրականում, որի մի մասը երևան հանեց անժամանակ խուզարկութիւնը, ապացոյց են, որ երկիրը եռում էր արդէն մի պայթման համար։ Բռնակալութիւնն զգաց պատրաստւող հարւածը և շտապեց վերից տալ այն, ինչ որ վարից պէտք է խլւէր կամ ուժով։

Նոյն ուղղութեամբ, անվհատ, յեղափոխական տարրերի հետ ձեռք-ձեռքի՝ մենք պէտք է շարունակենք մեր կռիւը բռնակալութեան և նրա նեխիչ կարգերի դէմ, բարձր պահելով ռամկավարութեան, ազգերի իրաւահաւասարութեան և աշխատաւոր ժողովրդի պաշտպանութեան դրօշակը, որ ծւատւել է փոթորկոտ ընդհարումներում, բայց դեռ մեր ձեռքն է և անարատ։ Այդ դրօշակին նայելով ընկան ա՜յնքան կորովի ընկերներ, կախաղան բարձրացան ա՜յնքան բարձր ոգիներ և բանտերի խաւարում տառապում են ա՜յնքան ազատութեան յուսացողներ։

Պատմութիւնը կանչում է մեզ նոր հերոսութեան և նոր զոհերի։

Ցոյց տանք աշխարհին, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը որքան յամառութեամբ կռւել գիտէր բռնակալութեան դէմ, այնքան ընդունակ է շինարար և ռամկօգուտ գործունէութեան։

Կեցցէ՛ Թիւրքիայի ընդդիմադիր տարրերի համերաշխութիւնը։

Կեցցէ՛ Հ. Յ. Դաշնակցութիւնը։

Հ. Յ. Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

1908, յուլիսի 12
Թիֆլիս

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՀՈՍԱՆՔԸ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՍԻՆԴԻԿԱԼԻԶՄ

„Դրօշակի“ նախընթաց համարներում մենք երկարօրէն կանգ առանք սօցիալիզմի և մանաւորապէս մարքսիստական սօցիալիզմի վրայ, բնորոշեցինք նրա սկզբնական, այսպէս կոչւած „կատաստրոֆային“ շրջանը և գծեցինք նրա ճակատագրական զարգացումը դէպի օրինականութիւն ու պարլամենտարիզմ։ Այժմ ծանօթանանք մի նոր հոսանքի հետ, որ ծայր է տալիս սօցիալիստական կեանքի ու գրականութեան մէջ, որ, կարելի է ասել, վերարտադրում է նախկին, աւանդական սօցիալիզմի „կատաստրոֆային“ ըմբռնումները։ Նրա անունն է՝ սինդիկալիզմ։

Այդ նոր հոսանքը առաջ է գալիս, որպէս մի տեսակ րէակցիա, հակազդեցութիւն ընդդէմ այն ծայրայեղ օրինականութեան, անշարժութեան ու օպպորտիւնիզմի՝ որոնց կլասիկ ներկայացուցիչն է գերմանական սօցիալ-դեմօկրատիան։ Ոչ մի կուսակցութիւն, արդարև, այնքան չի լցրել մթնոլորտը յեղափոխական շռնդալի բանաձևերով ու կոչերով և ոչ մէկը, միաժամանակ, չի մատնել այնքան մեղկութիւն ու պատեհականութիւն, այնքան երկչոտ զգուշաւորութիւն սօցիալիստական առօրեայ գործելակերպի մէջ, ինչպէս գերմանական սօցիալ-դեմօկրատիան։

Սակայն րէակցիան, հակադարձ շարժումը այդ հոյլ, մեղկացնող անշարժութեան դէմ, ծնունդ առաւ ոչ Գերմանիայում, ուր Կաուցկին ու Բիւլօվը աւելի են տոգորւած դիմագրական ոգով, քան Բէբէլների դաստիարակած բանւորական լէգիօնները—ոչ, այդ րէակցիան՝ նոյնպէս ծայրայեղ ու սանձարձակ իր արտայայտութիւնների մէջ՝ հանդէս եկաւ յեղափոխութիւնների հին օրրանում—Ֆրանսիայի մէջ։ Այդտեղ նա եռանդով արծարծւում է 7—8 տարուց ի վեր, ունենալով իբրև քարոզիչ-թէօրետիկոսներ՝ Ժորժ Սորէլ իր մի շարք աշխատութիւններով, Լագարդել իր „Mouvement socialiste“-ով, Էրվէ, Գրիֆուէլս և ուրիշները։ Ֆրանսիայից շարժումը անցաւ Իտալիա,—լատինական երկրորդ հայրենիքը, նոյնպէս սիրահար յեղափոխական ցնցումների. և այդտեղ նրա գլուխ կանգնեցին երիտասարդ պրօպագանդիստներ՝ Արտուրօ Լաբրիօլա, Էնրիկօ Լէօնէ, Օրանօ ևլն։

Այդ նոր քարոզիչները միանգամայն բացասական դիրք են բռնում դէպի բոլոր երկրների, ամբողջ աշխարհի սօցիալիստական կուսակցութիւնները, հռչակում են նրանց սօցիալիզմը իբրև կեղծ, նրանց տակտիկան իբրև սխալ ու կործանաբեր բանւորական դասակարգի համար, իսկ իրենք իրենց հրատարակում են, իբրև միակ ու ճշմարիտ սօցիալիստներ, միակ թարգման ու պաշտպաններ աշխատաւոր ընդհանրութեան շահերի ու տենչանքների։ Նրանք հրապարակ են նետում սօցիալիզմի մի նոր ձև, մի նոր անուն—„յեղափոխական սինդիկալիզմ“։

Ի՞նչ է յեղափոխական սինդիկալիզմը։ Ինչպէս անունն է ցոյց տալիս, նա յենւում է սինդիկատների, արհեստակցական միութիւնների վրայ։ Բայց այդ վերջինները, ինչպէս յայտնի է, կազմում են բաղադրիչ մասը ամբողջ ժամանակակից սօցիալիստական բանակի։ Բոլոր երկրներում սօցիալիստները, իրենց քաղաքական գործունէութիւնից դուրս, ձգտում են նաև կազմակերպել արհեստակցական միութիւններ, յենւում են նրանց վրայ իրենց տնտեսական ու քաղաքական պայքարի մէջ։ Բուն „սինդիկալիստներին“ բնորոշելու համար, պէտք է ասենք, որ նրանք յենւում են բացառապէս սինդիկատների, արհեստակցական ընկերութիւնների վրայ։ Նրանց պրօպագանդի միակ վայրն է՝ արհեստանոցը։ Ինչ որ դուրս է արհեստանոցից,—չի հետաքրքրում կամ շատ քիչ է հետաքրքրում նրանց։ Նրանք ոչ մի կարևորութիւն չեն տալիս պարլամենտական գործունէութեան։ Պարլամենտը — ասում են նրանք — շեղում է սօցիալիստական կուսակցութիւններին դասակարգային կռւի ճանապարհից, պարլամենտի մէջ սօցիալիստները համերաշխւում են բուրժուազական կուսակցութիւնների հետ և փոխանակ շեշտելու իրերց դասակարգային տեսակէտը, ձուլւում են բուրժուազիայի հետ։ Դասակարգերը զատելու տեղ՝ սօցիալիստները հաշտեցնում են նրանց։ Ամբողջ քաղաքական-պարլամենտական մեխանիզմը իր ընտրողական սիստէմներով, քւէարկութիւններով, րէֆօրմներով, ամբողջ սօցիալիստական քաղաքականութիւնը իր մշտնջենական իրաւախոհութիւններով ու բանւորական թէկուզ ամենալայն օրէնսդրութիւններով՝ հանդիսանում է, իբրև յետադէմ կամ պահպանողական մի գործօն, առաջնորդում է դէպի դասակարգերի հաշտութիւն, որի մէջ պիտի թաղւի բանւորական, պրօլետարական դատը։ Սօցիալիստական կուսակցութիւնները պարլամենտներում չեն ներկայացնում բանւոր

դասակարգ, չեն արտայայտում նրանց հարազատ շահերը, այլ պարզապէս դաւաճանում են նրանց։ Իրենց բովանդակ գործելակերպով նրանք միանում, նոյնանում են ռամկավարական հոսանքի հետ, որ նոյնքան թշնամի է պրոլետարիատի դատին, որքան յետադէմ ու պահպանողական հոսանքները։ Իրենց բովանդակ գործելակերպով նրանք վերջ ի վերջոյ ուժեղացնում են միայն պետութիւնը, իսկ այդ վերջինը միշտ և ամեն պարագայում, անգամ ամենաառաջադէմ իր ձևի տակ՝ անխնայ ու ոխերիմ հակառակորդ է պրոլետարիատին։

Այդպէս են տրամաբանում „յեղափոխական սինդիկալիստները“։ Նրանք ժխտում են պետութեան բոլոր ձևերը և հեգնում են սոցիալիստական կուսակցութիւններին — թէ ժողովական և թէ գեղիստ ու բէբէլեան—որոնք սոցիալական յեղաշրջումն առաջ բերելու համար՝ ձգտում են նւաճել պետական իշխանութիւնը և տալ նրան „բանւորական պարունակութիւն“։ Նրանք ժխտում են հայրենիքը, նման 1848-ի Մարքսեան Մանիֆէստին, որ յայտարարում էր թէ „բանւորները հայրենիք չունին“։ Նրանք, հետևապէս, դէմ են նոյնիսկ այն պատերազմներին, որոնց նպատակն է հայրենիքի պաշտպանութիւն։ Եւ նրանք կը քարոզեն դասալքութիւն՝ պատերազմի ժամանակ։ Հերվէների համար միևնոյն է՝ թէ ով կը լինի Ֆրանսիայի տերը, ինչպէս կը լինի նրա՝ կազմը—հանրապետութիւն, թէ Վիլհելմեան միապետութիւն։

Սինդիկալիզմը այդպիսով, ըստ իր էութեան, հակապարլամենտական է, հակապետական, հակահայրենասիրական ու հակամիլիտարական։ Սինդիկալիստների համար՝ պարլամենտ, պետութիւն, հայրենիք ևն—բուրժուազական գաղափարներ են, նախապաշարումներ, որոնցից միանգամ ընդմիշտ պիտի ազատուի բանւորութիւնը։ Նրանք ուզում են իրականացնել իսկական կոմունիզմը, ուզում են այժմից իսկ լինել ճշմարիտ աշխարհաքաղաքացիներ, ազատ՝ ազգային, հայրենական ամեն տեսակ կապերից, „շղթաներից“, կապած միայն շինարար, ստեղծագործող, ամենազօր աշխատանքի վարդապետութեամբ։ Նրանք ժխտում են գոյութիւն ունեցող սոցիալիստական ամեն տեսակ իդէոլոգիաներն ու թէորիաները և ընդունում են լոկ „արտադրողի, աշխատաւորի փիլիսոփայութիւնը“—չոր ու ցամաք դասակարգային կռիւ։ Կռիւ կազմակերպած սինդիկատների ու դրամատէրերի միջև, կռիւ յարաժամ ու յարաճուն, մանակի ու ընդհանուր գործադուլներով։ Կռիւ ուղղակի, անմիջական (action directe), առանց պարլամենտական պատգամաւորութիւնների, կոմիսարիաների, գիջումների։ Հեռո՛ւ կուսակցութիւնները, պարլամենտերները, հեռո՛ւ պոլիտիկանները, մտաւորականները, իդէոլոգները, իրենց դոգմերով ու ծրագիրներով։ Բանւորութիւնը ինքն է ուզում կռել իր ապագան, ինքն է ուզում սեփական ուժերով ու նախաձեռնութեամբ—առանց որևէ միջնորդութեան ու ինամակալութեան—ճակատ առ ճակատ դիմագրաւել իր ոսոխներին։

Հեռո՛ւ պետութիւնը։ Թող նա չը միջամտէ պրոլետարիատի ու բուրժուազիայի յարաբերութիւնների մէջ, չը փորձէ մեղմել դասակարգային ատելութիւնները։ Ո՛չ մի իրաւարար ու հաշտարար ատեան, ոչ մի կոլլեկտիվ, հաւաքական դաշինք, ոչ մի անջրպետ կապիտալիստների ու բանւորների միջև։ Կեանքի ու մահուան մշտնջենական ճակատամարտ, թէկուզ արիւնալի ու արհաւրալի։ Մի կողմից՝ գործատէրերի դաշնակցութիւնը, միւս կողմից՝ բանւորութիւնը, կազմակերպած սինդիկատների մէջ։ Թո՛ղ ազատ ալաք տան դասակարգային ախորժակներին—դա՛ է նորմալ, բնականոն վիճակը։ Ոչ մի հովանաւորող, սահմանափակող օրէնսդրութիւն։ Թո՛ղ կապիտալիստ դասակարգը ազատ աճեցնէ արդիւնաբերութիւնը, նետուի ամենախօլ, ամենախիզախ ձեռնարկների մէջ, թո՛ղ նա սանձարձակ թռիչք հաղորդէ յաւելեալ արժէքին, կեղեքման տենդին ու հարստահարութեան... Որքան մեծ լինի այդ կեղեքման ուժը, որքան համաձակ թռիչքներ առնէ կապիտալիզմը, որքան անխնայ ու անողորմ լինի դրամագլուխը աշխատանքի հանդէպ, որքան շեշտուի պրոլետարիատի թշուառութիւնն ու քայքայումը,—այնքան աւելի կը խորանայ անդունդը երկու հակամարտ դասակարգերի միջև, այնքան աւելի յանդուգն ու անողորմ թափ կ'առնէ և պրոլետարիատը իր ճակատագրական մաքառումների մէջ...

„Սինդիկալիզմը չի ուզում ենթարկուել ոչ մի արտաքին իշխանութեան, նա չի ուզում ոչ մի օրինական կարգաւորում, ոչ մի իրաւախոհութիւն։ Նա երբէք չի կապում իրեն որևէ հաւաքական դաշինքով, այլ տրւում է իր բնութեան ազատ հանճարին, գործադուլ է անում, երբ այդ իրեն հաճելի է, պահպանում է իր յարձակողական ընթացքի լիակատար ազատութիւնը“ *), այսպէս է ծանուցանում Էդուարդ Բերթ, նոր հոսանքի թէօրետիկոսներից մէկը։

„Սինդիկալիզմ և Գեդիզմ—երկու թշնամի եղբայրներ են և ոչինչ չը կայ աւելի դաժան, քան եղբայրների հակառակորդութիւնը։ Արդարև, սինդիկալիզմի էական գաղափարն է՝ որ անկարելի է կիրառել պետութիւնը բանւորական մտքով, ի նպաստ բանւորութեան։ Պետութիւնը իր էութեամբ ու նպատակներով բուրժուական մի բան է. հետևապէս, բանւոր դասակարգի յաղթանակը կարող է գլուխ գալ միմիայն պետութեան ոչնչացումով, նրա կազմալուծմամբ ու կլանումով՝ բանւորական մարմինների ծոցում։ Այն ինչ՝ Գեդիզմը բաւականանում է նրանով, որ նւաճում է պետութիւնը, փոխարինում է նրա բուրժուական պաշտօնէութիւնը իր-բանւորական պաշտօնէութեամբ. դա քաղաքական ուժի մի պարզ փոխադրութիւն է, մի զուտ մեխանիկական արշաւանք տարածութեան մէջ, որ հեռացնում է մէկ տիրոջը՝ մի ուրիշին նրա տեղը դնելու նպատակով։ Բոլոր քաղաքական օրգանիզմները, որոնց միջոցով պաշտօնավարում է բուրժուազական ռամկավարութիւնը՝ քաղաքային խորհուրդներ (Conseils municipaux), նահանգական խորհուրդներ (Conseils généraux), Պարլամենտ—բոլորն էլ մասնիկներ են բուրժուազիայի քաղաքական զօրութեան. բոլոր այդ կենտրոններում ձգտում են դառնալ մեծամասնութիւն, որպէս զի շահագործեն իշխանութիւնը յոգուտ բանւոր դասակարգի. իսկ միակ իրապէս բանւորական օրգանիզմը, սինդիկատը, միակ մարմինը, որ ներկայացնում է արտադրողների (producteurs) տնտեսական հասարակութիւնը՝ ոչ-արտադրողների (non-producteurs) քաղաքական կամ ձրիակեր հասարակութեան դիմաց—այդ միակ բանւորական օրգանիզմը ծիւլ Գեդ ու իր համախոհները կուզէին ստորադրել միւս օրգանիզմներին։ Ընդհակառակը, հենց այդ բանւորական սինդիկատն է (արհեստակցական ընկերութիւնը), որ ներքողում ու հռչակում է սինդիկալիզմը. նա՛ է, որ պիտի լուծէ իր մէջ և՛ հասարդը, և՛ պետութիւնը։ Արհեստանոցը,—ազատ ու իրաւահաւասար խմբակցութիւնը բանւորների, տեր իրենց աշխատանքի գործիքների ու իրենց հաւաքական ուժի, որ մինչև օրս դրուած է եղել կապիտալի ու պետութեան տրամադրութեան տակ—ահա, ըստ սինդիկալիզմի, կենտրոնն ու հոգին բուն սոցիալիստական հասարակութեան“... **)։

Լինելով անհաշտ հակառակորդ Գեդիզմի, ժօրէսիզմի և սոցիալիստական բոլոր ուրիշ ուղղութիւնների՝ սինդիկալիզմը—դէթ Սորելի ու Լագարդելի բերանով—նոյնքան անհաշտ հակառակորդ է յայտարարում իրեն և ատրխիզմի (անիշխանական հոսանքի)։

„Անարխիստական սոցիալիզմը, չը նայած իր յանդուգն ըմբոստացումներին, չի ունեցել պարզ հակացողութիւն դասակարգերի ու դասակարգային կռիւի մասին։ Անգիտանալով տնտեսական օրէնքները՝ նա դիմումն արեց բոլոր մարդկանց, առանց խորութեան, և իր գլխաւոր ջանքը կենտրոնացրեց անհատական բէֆորմի վրայ՝ գրական, բացիօնալիստական ու գիտական դնորամիտ կրթութեան միջոցով։ Սակայն, պետութեան սկզբունքի սանտիմենտալ ու վերացական ժխտումը անզոր է յաղթահարելու ճնշող ուժը բոլոր բոնի

*) *Ed. Berth, Les nouveaux aspects du Socialisme*, եր. 23։

**) *Ed. Berth*, նոյն աշխատութիւնը, եր. 16։

իշխանութիւնների, որոնք կարող են ոչնչացնել միայն յեղափոխական պրոլետարիատի կոնկրետ ստեղծագործութիւններով... Սինդիկալիզմը ընդգրկում է բանւոր դասակարգը իր մարտական գոյացումների մէջ. նա համարում է բանւորութիւնը միակ դասակարգը, որ իր կեանքի պայմաններով ու գիտակցութեան շեշտումներով կարող է վերանորոգել աշխարհը, բայց միայն պայմանով՝ որ մնայ օտար բուրժուազական հասարակութեանը։ Սինդիկալիզմը վերցնում է բանւոր-արտադրողներին արհեստանոցի շրջանակներում, ինչպէս և նրա ճիւղաւորութիւնների մէջ—սինդիկատներում, համարհեստակցական դաշնակցութեան մէջ, աշխատանքի բորսաներում և՛ն, կազմակերպում է նրանց ըմբոստացումը գործատէրերի իշխանութեան դէմ. բացասելով կառավարութիւն և օրէնք, հարստացնելով բանւորական հաստատութիւնները նորանոր ֆունկցիաներով, նա քայքայում է պետութիւնը, խախտում է նրա լիազօրութիւնները. գործադուլներով, ընդհանուր գործադուլի պրոպագանդով նա ժամ առ ժամ քանդում է դասակարգային համերաշխութեան այն ստայօղ գործը, որին հետամտում է ռամկավարութիւնը. նա արիւն ու մարմին է հաղորդում զուտ պրոլետարական գաղափարներին, այսինքն, կռւի մէջ ծնւած իրաւական զգացումների ամբողջութիւնը,— որոնք կազմում են մի նոր իրաւունքի խարիսխը, մի նոր հասարակութեան՝ առանց տէրերի ու հրամանատարների“ *)։

Մարքսը ասել է դեռ քառասնական թւականներին, որ բանւորների ազատագրութիւնը պէտք է կատարւի նոյն իրենց, բանւորների ձեռքով, և այդ յայտարարութիւնը ծառայում է այսօր յեղափոխական սինդիկալիստներին, որպէս հիմնական նշանաբան։

„Ինտելիգենտ, խորհող սինդիկատները, արհեստակցական ընկերութիւնները, բաւականաչափ լաւ են ըմբռնում,—ասում է Էնրիկօ Լէօնէ—որ բանւորական ազատագրութիւնը չի կարող կայանալ որևէ կուսակցութեան քաղաքական յաղթանակի մէջ, այսինքն իշխանութեան ղեկը նւաճելու մէջ, այլ որ այդ ազատումը կարող է գլուխ գալ միայն շահախնդրւած դասակարգի ճիգերով, դուրս ամէն խնամակալութիւնից՝ կուսակցական թէ միջնորդական“ **)։

Ֆրանսիական սինդիկալիստները, մանաւորապէս հպարտ իրենց պրոլետարիատի յեղափոխական աւանդութիւններով և ըմբոստ խառնւածքով, վստահ են, որ այդ անմիջական գործողութեան մեթօդը պիտի գտնի Ֆրանսիայում ընդարձակ ժողովրդականութիւն։ Եւ ֆրանսիացիք արտասանում են ամենախանդավառ ներբողներ „ընդհանուր գործադուլին“, որը նրանց կարծիքով բովանդակում է իր մէջ ամբողջ սօցիալիզմը։

„Յեղափոխական սինդիկատները ամփոփում են ամբողջ սօցիալիզմը ընդհանուր գործադուլի մէջ (*Grève générale*)· նրանց աչքում ամէն մի գործադուլ մասնակի ընդօրինակումն է, սահմանափակ փորձը, նախապատրաստութիւնը վերջնական մեծ վերիվայրումի համար“ ***)։

Եւ այդտեղ, այդ վերջնական կատաստրոֆի մէջ, ասում է Սօրէլ, բնաւ տեղ չի լինի սօցիօլօգներին, րէֆօրմների սիրահարներին և ամէն տեսակ մտաւորականներին։

Ի՞նչ թունաւոր սլաքներ ունի նորագոյն սինդիկալիզմը մտաւորականների համար։ Սօրէլ իր սանձարձակ յարձակողականի մէջ պարզապէս յայտարարում է, որ սօցիալիզմի ու պրոլետարիատի անունով խօսող քաղաքական ու այլ գործիչները, ամբողջ կուսակցութիւնները դաւաճաններ են այդ պրոլետարիատին, որ այդ վերջինը „մտաւորականների“ համար սոսկ թնդանօթային միս է միայն (*Le prolètariat est pour eux de la chair à canon* ****)։ Սինդիկալիստների համար գոյութիւն չունի այսպէս անւանւած „մտաւոր պրոլետարիատը“։ Բժիշկներ, գրագէտներ, ուսուցիչներ, արտիստներ, փաստաբաններ, գիտութեան սպասաւորներ, պետական այլևայլ պաշտօնեաներ,—բոլորն էլ իրենց դասակարգային-բուրժուական շահերն ունին և իրենց էութեամբ հակառակորդ են պրոլետարիատին։ Նրանց սօցիալիզմը կեղծ է, քօղարկւած։

Ճշմարիտ սօցիալիզմը Արհեստանոցումն է, ձեռքի աշխատաւորների շրջանում։ Այդպէս է դատում յեղափոխական սինդիկալիզմը։ „Մտաւորականութիւնը“ *en bloc* ներկայանում է նրան, որպէս մի կաստա, որ նոյնպէս այս կամ այն ձևով շահագործում է պրոլետարիատին և հետևապէս երբէք չի կարող թարգման լինել վերջինի շահերին *)։

Բանւորութիւնը՝ մեն-մենակ, և՛ ընդդէմ պետութեան և՛ ընդդէմ ամբողջ բուրժուազիայի։ Մեն-մենակ՝ յենւած իր կազմակերպւած ուժի և իր անմիջական գործողութեան մեթօդի վրայ։ Առանց որևէ ուրիշ տարրի աջակցութեան և այդ մեթօդով, ընդհանուր, համատարած գործադուլով՝ նա առաջ է բերում սօցիալական մեծ յեղաշրջումը, ոչնչացնում է կապիտալիզմը։ Սինդիկալիստները վճռականօրէն յետ են մղում խաղաղ, օրինական միջոցները և—անգամ ամենաառաջադէմ՝ ռամկավարութիւնների մէջ—հռչակում, աստւածացնում են՝ բռնութիւնը—*la violence!*

Այդ թեմային է նւիրւած Ժօրժ Սօրէլի մի մեծ հատորը—„*Réflexion sur la violence*“, „Խորհրդածութիւններ բռնութեան մասին“։ Բռնի գործողութիւնները—ասում է Սօրէլ—կարող են պատմական արժէք ունենալ միմիայն այն դէպքում, երբ նրանք կոպիտ ու պարզ արտայայտութիւն են դասակարգային կռւի...

Աշխարհը տնտեսական անկումից ու այլասեռումից փրկելու համար՝ պէտք է զօռ տալ բռնութեան... „Ամեն բան կարող է փրկւել,—ասում է սինդիկալիզմի մոլեգնոտ ռահվիրան—եթէ պրոլետարիատը աջողէ ամրացնել դասակարգային անջրպետները և հաղորդէ բուրժուազիային իր կորովից որևէ բան... Պրոլետարական բռնութիւնը, գործադրւած, իբրև լոկ պարզ արտայայտութիւն դասակարգային կռւի զարգացման՝ հանդիսանում է, որպէս մի շատ գեղեցիկ հերոսական իրողութիւն։ Նա գալիս է ծառայելու քաղաքակրթութեան տարրական շահերին։ Նա գուցէ այնքան էլ յարմար չէ՝ անմիջական նիւթական շահ ձեռք բերելու համար, բայց նա կարող է փրկել աշխարհը բարբարոսութիւնից“ **)։

Պէտք են յարաժամ գործադուլներ, ըստ կարելւոյն բռնութիւններով։

„Ամեն մի ընդհարում, որ տեղիք է տալիս բռնի գործողութիւնների, դառնում է առաջապահ մի ճակատամարտ և ոչ ոք չի կարող նախատեսել, թէ ինչ կարող է առաջանալ այդօրինակ ճակատամարտերից... Իւրաքանչիւր ընդհարման միջոցին գործաթողները յոյս են տածում նշմարել սկիզբը նապօլէօնեան մեծ ճակատամարտի, որ պիտի ջախջախէ վերջնականապէս յաղթւածներին։ Այդպիսով ծննունդ է առնում—գործադուլների շնորհիւ—կատաստրոֆային, աղէտալի յեղափոխութեան գաղափարը“ ***)։

Այդպէս են ըմբռնում սինդիկալիստները բանւորական ազատագրութիւնը։ Նրանք հռչակում են Մարքսի վաղեմի կատաստրոֆային թէօրիան իր բոլոր բարեմասնութիւններով։ Նրանք յենւում են նախնական մարքսիզմի վրայ։ Ոմանք սինդիկալիստներից՝ հրապարակ են կոչում և Պրուդոնին։ Բայց գլխաւորապէս Մարքսն է հռչակւում, իբրև ճշմարիտ յեղափոխական սինդիկալիզմի նախահայր։ Սօրէլ, Լաբրիօլա, Լէօնէ համոզւած են, որ միմիայն իրենց քարոզած մեթօդն է համապատասխան մարքսիզմի ու մանաւորապէս մատերիալիստական թէօրիայի ոգուն, որի համեմատ կապիտալիզմը, իր ներքին հակասութիւնների զօրութեամբ, դիալեկտիկական ժխտման օրէնքով,

*) *H. Lagardelle, Syndicalisme et Socialisme* (Դասախօսութիւնների ժողովածու), եր. 5։
**) *Enrico Leone, „Il Sindacalismo“*, եր. 70։
***) *G. Sorel, Réflexions sur la violence*, եր. 86։
****) *G. Sorel, ibid.* եր. 147։

*) Տես *E. Leone, Sindacalismo*, եր. 86—87—88։
**) *G. Sorel, Réfl. sur la violence*, եր. 57,
***) *Idem*, եր. 30։

*մի տեսակ ճակատագրական անհրաժեշտութեամբ հիւսում է արդէն իր մահապատանը, գնում է արդէն դէպի վերջնական կ ա տ ա ս տ ր օ ֆ ը, ուր պիտի խաւարի... Սինդիկալիստները որդեգրում են մարքսիզմի մի շարք սկզբնական դրութիւնները, որոնք սրբագրուած են յետագայում, ընդունում են նոյնիսկ աստիճանական թշուառացման թէօրիան (Verelendungstheorie), և Կարլ Մարքսի յայտնի ծանուցումը, թէ բանւոր դասակարգի վրայ ծանրացած է մի ռէժիմ, որի տակ „հետզհետէ աճում է թշուառութիւնը, հարստահարութիւնը, ստրկացումը, այլասերումն ու կեղեքումը" *):*

*Աստիճանական թշուառացման այդ տարրերային պրօցէսը տանում է դէպի „փրկարար ճգնաժամը", ուր պրօլետարիատը պիտի խորտակէ միանգամ ընդմիշտ պետութիւն, կապիտալիզմ և բոլոր հարստահարիչ ուժերը: Կապիտալիզմի փոխանցումը դէպի սօցիալիզմ, Սօրէլի կարծիքով, „պէտք է պատկերացնել մեզ, իբրև մի կատաստրօֆ, որի ընթացքը չի ենթարկւում նկարագրութեան" **):*

Իրօք այդ վերջնական կատաստրօֆի հարցը շատ էլ չի զբաղեցնում սինդիկալիստներին: Բերնշտայնի պէս, նրանք ևս ասում են, որ „շարժումը ամեն բան է, վերջնական իդէալը—ոչինչ, կամ երկրորդական": Սակայն նրանք Բերնշտայնի հակոտնեաներն են: Մինչդեռ վերջինս իր հռչակաւոր աշխատութեան մէջ (Die Voraussetzungen des Sozialismus..) գրեթէ բոլորովին ձուլում է սօցիալիստական գործելակերպը ռամկավարականի հետ,—սինդիկալիզմը միանգամայն թշնամական դիրք է բռնում դէպի ռամկավարութիւնը, դէպի պետութեան բ ո լ ո ր ձևերը և հրապարակում է նրանց դէմ մ շ տ ն ջ ե ն ա ւ ո ր պատերազմ, բռնութիւններով ու արիւնհեղութիւններով,—Յեղափոխութիւն en permanence:

Այդպէս է նոր մեթօդը: Մենք տուինք նրա ընդհանուր, ամփոփ բնորոշումը: Մենք կը տանք գալ անգամ՝ նրա համառօտ քննադատութիւնը:

*) *G. Sorel, ibid.* եր. 105:
**) *Réflexion sur la violence,* եր. 122:

ՆՒԻՐԱՏՒՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Բիւրօն ստացած է՝

Գրիգոր մեքենագործ 5 ֆրանկ, Մխնեան 5 ֆրանկ, X 7 ֆրանկ:

Պալքանեան Կեդր. Կոմիտէն՝

ՊՐ. ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ.—(Նախորդ տարեշրջանի հաշիւ) հետեւեալ խմբերից՝ Նիհար 149 ֆրանկ, Առից 90, Արարատ 108, Արծաքանի 89, Անդրանիկ 129, Կարմիր լեռ 111, Ազուլ 89, Գուրգէն 120, Հաւարային 114. 25, Տարօն 109, Եփրատ 98, Արծիւ 84, X սրճարանի հասոյթ 1191: Գումար 2481 ֆրանկ 25 սանթիմ:

ՓՇՈՏ ՎԱՅՐԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ.—(Նախորդ տարեշրջանի հաշիւ) Տիկ. Կարմիր խաչի խումբէն 284 ֆրանկ:

ԴԱՆՈՒԲ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ (նախորդ տարեշրջանի հաշիւ).— Տիկն. Կ. Խաչի գանձանակէն 109 ֆրանկ, եւս 100, Կարին 24 ֆրանկ, եւս 27, Հազուլ 33, եւս 30, Ֆէդայի 30, եւս 24, Նէմրութ 24, եւս 24, Վարազ 33 եւս 30, Զինատէր 27, եւս 30, Արարատ 27, եւս 33, Նոր դար 39, եւս 63, Սեպուհ 15, եւս 18, Սերոբ Աղբիւր 27, եւս 30, X Սրճարանէ 692. 10, եւս 411. 95, Պուրակ ծառէ նւէր 5, Մամիկոնէ նւէր 5. Ծաղիկէ նւէր 5, Գարագէ նւէր 10, Մամասէ 5, Կշիռէ 20, Կարինէ 10, Գնունիէ 5, Զաքինէ 2, Պ. Արթինէ տուգանք 5, Ծախուած գրքերէ եւ պատկերներէ 32. 75: Գումար 2005 ֆրանկ 80 սանթիմ:

„Եփրատի" մէջ ծախուած քարտէ՝ Ս. Գ.-է՝ 15 ֆր.:

ՄԱԿԵԴՈՆ ԿՈՄԻՏԷ (հանգանակութենէ).—№ № 17879՝ 5 ֆրանկ, 17880՝ 5, 17881՝ 5, 17882՝ 2, 17883՝ 10, 17884՝ 10, 17885՝ 2 17886՝ 3, 17887՝ 3, 17888՝ 3, 17889՝ 5, 17890՝ 5, 17891՝ 3, 17892՝ 2, 17593՝ 5, 17894՝ 5, 17895՝ 5, 17896՝ 4, 17897՝ 6, 17898՝ 2, 17857՝ 5, 17858՝ 5, 17859՝ 5, 17860՝ 5, 17861՝ 2, 17862՝ 5, 17779՝ 20, 17780՝ 50, 17781՝ 11, 17782՝ 100, 17783՝ 60, 17784՝ 50, 17827՝ 4, 17828՝ 2, 17829՝ 2, 17830՝ 5. 17831՝ 2, 17832՝ 3, 17833՝ 2, 17834՝ 5, 17835՝ 3, 17836՝ 2, 17837՝ 5, 17838՝ 5, 17839՝ 10, 17840՝ 5, 17841՝ 2, 17842՝ 4, 17843՝ 5, 17845՝ 5, 17846՝ 5, 17847՝ 5, 17848՝ 5, 17849՝ 5, 17850՝ 1, 18115՝ 20. 18116՝ 20, 18117՝ 15, 18118՝ 12, 18119՝ 20, 18120՝ 50, 18121՝ 30, 18122՝ 20, 18123՝ 10, 18124՝ 100, 18125՝ 20, 18126՝ 10, 18127՝ 20, 18128՝ 30, 18129՝ 20, 18130՝ 20, 18131՝ 40, 18132՝ 15, 18133՝ 10, 18134՝ 15, 18135՝ 20, 18136՝ 20, 18137՝ 2օ0, 18138՝ 20, 18139՝ 10, 18163՝ 2, 18165 5, 18166՝ 5, 18167՝ 3, 18168՝ 5, 18169՝ 5, 18170՝ 5, 18171՝ 20, 18172՝ 15, 18173՝ 100 ֆրանկ: (Շարունակելի)

Ջաւախանգասի Կեդր. կոմիտէն՝

ՋՐԱՇԷՆԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ 1904 թ. յունիսից դեկտ. — Հետեւեալ խմբերից՝ Ազնիւ Տարօնացի 21 ռուբլի, Խամր-բերդ 25, Երկ. Արծրունի 12, եւս 9, Սասնոյ վիշապ 29, Շէկ աւէտ 16, Ազնիւ Տարօնացի 6, Ղարիբ 12. 50, Սարդ 1. 90, եւս 1. 90, Գրգուռ 80, Երկրորդ Արծրունի 16, Պահանջ 15, Սասնոյ վիշապ 10, Ղարիբ 12, Երկ. Արծրունի 7. 50, Ձէյթ. վիշապ 15, Կարին 6, Գրգուռ 26, Սարթ 7. 30, Շէկ-աւէտ 5. 50, Ազնիւ Տարօն 10, Խամր բերդ 25, Պահանջ 6, Ամրոց 14, Սարթ 1, Ազնիւ Տարօնացի 9, Ղարիբ 10, Կտրիճ 5, եւս 2, Շէկ-աւէտ 5, Խամր-բերդ 24, եւս 5, Երկ. Արծ. 22. 50, Գեղարդ 9. 50, Ասլան 7. 40, Սեւան 7. 50, Թուխման 7. 50, Կտրիճ 4, Ջ.-ից 3, Պ-ից 2, Ջ-ից 2, Ձէյթ. վիշապ. խ. Ա.-ից 1, Կ. եւ Գ.-ից ապառիկ 7 ռ.: 1906 թ. յունուարից հոկտեմբեր.—Հետեւեալ խմբերից՝ Կտրիճ 4. 50 ռուբլի, եւս 9, Սասնոյ վիշապ 28, Մի անդամ 2. 50, Ազնիւ Տարօնացի 12. 50, Խամր-բերդ 78, եւս 4, Ղարիբ 21, եւս 2, Սոչխան 12, Գրգուռ 80, Պահանջ 21, Երիրորդ Սասունի 30. 50, երեկոյթից 295. 90. Շահէնից 13. 50, Տիգ. Դաբաղ-ից 3, Ռուբէնից 2, Գասպար Շահվ-րից 2, Պ. Մարգ-ից 1, Երւանդից 87. 70, եւս 81, Ալիքից 8 ռ.: 1907 թ. յուն.—Ղարիբ խմբ. 20. 50, Սասնոյ վիշ. խ. 31, Կտրիճ խ. 15. 50, Կարոյից 3, Խուրշուտից 5, Արուէնից 1 Եսայից 1. 50, Յ. Ասատից 1, Ազնիւ Տարօն խ. 18. 50, Սարթից 14. 40 ռուբլի:

ԳԱՂԹԱՎԱՅՐԻ ԿՈՄԻՏԷՆ 1905—1906 թ. — Հետեւեալ խմբերից՝ Բարձր գիւղի Միացեալ 31 ռուբլի, Կայծակ 12, Արարատ գ. Սահող 13. 50. Ծովափն 8. 50, Հրայր 9. 50, եւս 37, Քարագիւղի Առիւծ 80. 75, եւս 3. 15, Խորխոռից 7. 20, Բարձրաւանդակի Ծերակոյտ 13. 50, Լոյս 9, Միացեալ 61. 50, Վարդունի 1. 50, Սոխակ 19. 50, եւս 13. 30, Նորաշէնի Դժողք 17. 50, Արծաթագուր գ. Սերոբ 15. 60, Եփրատ գ. Անուշաւան 7. 64, Դժողք 7. 20, Աշտարակ գ. Վազգէն 63, եւս 18, Ծիածան 5, Ոսկի 5, Արտամետ գ. Արմենակից 3, Արայից 2. 50, Գեղամից 1. 50, Արամայիս 3, Ամասեա 1. 50, Հարմայից 3, Վահագնից 3, Ծով գ. Իրաւախոհ 50. 40, եւս 4, Քաջ 86. 40, եւս 9. 20, Համշէնեան 71, եւս 1. 65, Մայր 32. 40, եւս 15, Քարաժայռ գ. Բաբկէն 11, Բարձր գ. Արամեան 4, եւս 2, Սարալանջ գ. Վազգէն 19, Արամեան 37. 20, Վազգէն 65, Նորակազմ 66. 30, Եարիբեր գ. Անդրանիկ 75, Յարութիւն 10, Բաշձրաւանդ. գ. Քրիստ. 6, Մխիթ. 6. 60, Կայծակ 30, Ծերակոյտ 13, Նոր աշխարհ Կեանք 36. 10, եւս 5. 85, Քարեբար 3, Սկզբունք 100, Գետէզր գ. Աղբիւր 92. 88, Գաղթավայրի Մուրճ 1, Բաբկէն 6, Ասլան 28, Հայկ 3, Վանդահպասի Ս. Յակոբ 15, Միացեալ 6, Ծաղիկ 10. 30. Ս. Յակոբ 20, Բլակ գ. Անդրանիկ 45, Անտառապատ գ. Մասիս 137, եւս 2, Եգիպտացի 29. 75, Նորաշէնի Արօ 44, եւս 1. 50, Բարձրաւ. գ. Արշալոյս, Դժ. 91, եւս 9. Ծերակոյտ 52. 50, Ապառաժ գ. Արաքս 30. 60, Բարձրաւանդ. գ. Արաքս 23. 40, Ծովափ. 1, Անդրանիկ 72, եւս 9. 40, Գաղթավայրի 2 ներկայացում. 129. 65, Խաչագող Ս.-նորդից 47, Սահող 2, Ծերակոյտ 2, Գէորգ Բիւլ.-ից 30, Միացեալ 2, Իրաւախոհ 5. 70, Ս. Յակոբ 15, Մեռքից 6, Մհէից 15, Ծովասար 20, Սկզբունք, 13. 40, Շանթ Վահրամից 2, Բլուր գ. Արշաւիր 48, Յովհաննէսից 33. 60, Ծերակոյտ 20, եւս 1, Վազգէն 60, Գետէզր գ. Խան 35. 40, Տիգրիս գ. Հրայր 60, Յովհ. Ջաշիկ 3, Աբրահամից 10, Եփրատ գ. Անուշաւան 62. 30, Վազգէն 205, Միացեալ 38, եւս 20. 50, եւս 21, Վազգէն 32. 50, Անուշաւան 3, Սարալանջ գ. Նորակազմ 62. 40, Կայծակ 20, Ծննդեան տօնախմբ. 2. 30, Արաքս գ. Կայծակ 43. 50, Գաղթավայրի Կայծակ 10, Շանթ Վահրամից 5, Ջաշիկից 15, Բարձր գ. Հայրենասէր 38. 40, Սկզբունք 60, Կայծակ 16. 10, Դժողք 8, եւս 42, Սկզբունք 200, Դաշտ գ. Արագած 35. 50, Բաց գ. Քէսում 13. 60, Հայկաշէն գ. Խեղճուկրակ 12, Եփրատ գ. Անուշաւան 70, Արաքս գ. Կայծակ 38. 5, Բարձր գ. Միացեալ 29, Դաշտ գ. Արագած 20 ռուբլի:

(Շարունակելի)

ՀԵՌԱԳՐԻ ՀԱՍՑԷ՝ „*DROSCHAK*", *Genève*: